

Զրույց արձակագիր Սուսաննա Հարությունյանի հետ

«Ագռավները Նոյից առաջ» ժողովածուի առիթով

Օգոստոսի 2, 2017 թ.

Տեսակետ

Հրատարակված՝ օգոստոսի 30, 2017

Պատրաստված՝ [Եվրասիա համագործակցություն հիմնադրամի](#) կողմից

Ժողովածուն հասանելի է [այստեղից](#).

Գևորգ Տեր-Գաբրիելյան (ԳՏԳ) – Բարև ձեզ: Մենք շարունակում ենք [Jam Session](#)-ների մեր շարքը, հետաքրքիր մարդկանց հետ զրուցելու ուղղությունը, և այսօր մենք կզրուցենք արձակագիր [Սուսաննա Հարությունյանի](#) հետ: Եվ մեր զրույցի հիմնական թեման կլինի նրա վերջին գիրքը՝ «Ագռավները Նոյից առաջ» ժողովածուն, որը պատմվածքներ է պարունակում և «Ագռավները Նոյից առաջ» վերնագրով վեպը: Մա նշանակում է, որ մենք խոսելու ենք արձակի մասին և Սուսաննայի՝ որպես դրա հեղինակի: Դա նշանակում է նաև, որ մենք պիտի մի քիչ ներկայացնենք, քննարկենք, թե այդ արձակը ինչ է, և փորձենք խորանալ հեղինակի «խոհանոցի» մեջ, եթե հնարավոր եղավ, եթե Սուսաննան թույլ տվեց դա անել:

Սուսաննա ջան, ուրեմն ես ուզում եմ առաջին հարցը ձևակերպել մի քիչ էլի նախաբանով, որովհետև մեծ մասը ով որ դիտելու է սա, ինձ թվում է, դեռևս, համենայն դեպս, այս ժողովածուն կարդացած չեն լինի: Դրա համար պիտի մի քիչ, մի երկու խոսք ասենք, թե ինչի մասին է խոսքը: (- Հա, խնդրեմ): Ուրեմն պատմվածքները Սուսաննայի հիմնականում կարճ են, և ես կասեի, որ նովելային կառուցվածք ունեն: Ես երկու օրինակ եմ ուզում բերել պատմվածքի, և հեշտությունն այն է, որ կարելի է մի քանի նախադասությամբ գլխավոր սյուժետային գիծը ներկայացնել որոշ դեպքերում: Մեկը դա այն է, որ կինը գնում է դեպի եկեղեցին հոխորտալով և հասնում է եկեղեցի, տերտերը փախած է, իր տանը փակված է: Կինը նստում՝ սպասում է, սպասում է: Տերտերը վախեցած է, չի ուզում դուրս գալ: Հետո դուրս է գալիս, գիշեր է արդեն, և կինը նրան մոտենում է, ասում է. «Հետ տուր ինձ իմ մեղքերը»: Մյուսը. ուրեմն այն մի ինչ-որ տարեց մարդու մասին է, որը ապրում է Երևանի մի թաղամասում, ինչ-որ նկուղային տարածքում, ինչ-որ գործեր է անում շատ քիչ փողի դիմաց, ինչ-որ ուտելիքի դիմաց, շատ խղճուկ կյանքով է ապրում: Հետո անհետանում է, սկսում են նրան փնտրել, ոստիկանն է գալիս: Եվ այդ թաղի մարդիկ ասում են, որ նա միշտ ասում էր, որ «Ես մի շքեղ տուն ունեմ»: Հիմա էլ գնացել է գուցե այնտեղ: Բայց շատ երկար ժամանակ չկա: Ոստիկանը չի հավատում: Հետո այդ մարդը հայտնվում է՝ երկու շաբաթ հետո, ոստիկանը ասում է. «Ո՞ւր էիր»: Ասում է. «Գնացել էի իմ շքեղ տունը կարգավորեմ»: Մա ասում է. «Ո՞նց թե, դու շքեղ տուն ունե՞ս»: Ասում է. «Հա, գնանք՝ ցույց տամ»: Գնում են, ցույց է տալիս: Ոստիկանը զարմացած է; Ասում է. «Եթե այսպիսի տուն ունես՝ ինչո՞ւ կամ այստեղ չես ապրում, կամ, ասենք, չես վաճառում՝ Երևանում նորմալ տուն գնում, բնակարան»: Եվ այս մարդը ասում է. «Ինչպե՞ս թե, չե՞ որ մարդը

պիտի վերադառնալու տեղ ունենա»: Ահա, ես շատ սխեմատիկ կերպով երկու պատմվածք ներկայացրեցի, և ուզում եմ էս առաջին հարցը ձևակերպել. որքանով են էդ պատմությունները կյանքից, իրականում եղել են, տեսել էս, թե՞ ինքդ հորինել, երևակայել էս:

Սուսաննա Հարությունյան (ՍՀ) – Կարելի է տարբեր կերպ մեկնաբանել: Ուրեմն՝ առաջին պատմվածքը կոչվում էր «Արևելյան պատի տակ». դա վստահության կորուստն է: Մարդը վստահել է Տեր Հորը, նրան մաքուր է կարծել, իր մեղքերն է խոստովանել և հանկարծ ինչ-որ բամբասանք է դիպչել Տեր Հորը և պարզվել է, որ Տեր Հայրն էլ է մեղավոր- և ինքը շատ ավստում է, որ... նույնիսկ մեղքերը պետք է վստահել արժանավոր մեկին, այսպես ասեմ, գուցե ամենաարժանավորին ես վստահում քո մեղքերը՝ նաև այդ իմաստով: Երկրորդը՝ իրոք էդ մարդու դեպի իր ակունքը, դեպի իր սկիզբը վերադառնալու ձգտումն է, որ ինչ էլ անեինք, ո՛նց էլ անեինք, միևնույնն է՝ քո արմատները քեզ կանչում են, դու վերադառնում ես այնտեղ, որտեղից... որտեղ քո ելման կետն էր: Եվ ըստ էության կոնկրետ որոշակի հերոս, եթե նկատենք, որ ասեմ. «Այ, էսինչ մարդն էր, էսինչ ընկերս էր, էսինչ ծանոթս էր», այդպիսինը չկա: Բայց այդպիսին ենք մենք բոլորս: Ասենք՝ արդյո՞ք մեր սփյուռքահայերը այդպիսին չեն, երբ ապրում են Ամերիկայում կամ Պարսկաստանում, բայց Երևանում անպայման պիտի տուն ունենան չէ՞, մեր ասենք...

ԳՏԳ – Եվ գերեզման, դրա մասին էլ կխոսենք. «Հումուս» պատմվածքում:

ՍՀ – Եվ գերեզման, այո՛, հա՛: Եվ նույնը էդպես «Արևելյան պատի տակ». էդ վստահության կորուստն է, որ մենք բոլորս իրար չենք վստահում և չենք վստահում նաև ինքներս մեզ, չէ՞: Սկսած այն բանից, որ մեր արվեստագետները, երեխաները, բոլորը դրսում են կայանում, նոր մենք հասկանում ենք, որ մենք գանձի տեր ենք: Սովորաբար այդպես չի լինում: Ամբողջ աշխարհում այսպես է. մարդը իր հայրենիքից է գնում դեպի աշխարհ: Ենթադրենք՝ դու գրող ես, քեզ ընդունում է քո ժողովուրդը և քո փառքը օրերից մի օր դուրս է գալիս քո երկրի սահմաններից: Հայաստանի դեպքում այդպես չի՝ քեզ պիտի հրատարակի օտար հրատարակիչը, քեզ պիտի գրախոսի օտար գրականագետը և հանկարծ պարզվի, որ դու մեծությունն ես: Այդպես... Այդպես շատ է եղել և...

ԳՏԳ – Քո դեպքում էլ է այդպես ինչ-որ իմաստով:

ՍՀ – Հա՛: Ինչ-որ իմաստով՝ այո՛, ներսում ոչ թե չեն հարգում կամ չեն գնահատում ինձ կամ իմ գրականությունը...

ԳՏԳ – Քիչ գիտեն:

ՍՀ – Քիչ պրոպագանդված... Հա, ես ժամանակ չունեմ և նաև կապեր չունեմ պրոպագանդելու ինքս ինձ, իմ գրականությունը, այնքանով որքանով թույլ է տալիս մեր լրագրողների ճաշակը կամ գրականագետների պրոֆեսիոնալիզմը՝ անդրադառնում են իմ գործերին: Բայց ասենք այն հեղինակներից չեմ, որ այսպես նպատակամղված աշխատեմ իմ գործերի պրոպագանդայի վրա և այդպես նույնիսկ ժամանակ ու հնարավորություն էլ չունեմ դրա համար: Որովհետև մեր գրողներից շատերը աշխատում են լրատվամիջոցներում կամ աշխատել են հեռուստատեսություններում, էդ իրենց ընկերական կապերը... Ընկերական կապեր ասվածը. որ ընկերները կարդում են, գնահատում են և այդ մասին բարձրաձայնում են: Իմ դեպքում՝ ես այսպես մեր տանը նստած գրող եմ և գրական շրջանակից դուրս այլ կապեր չունեմ: Իմ բոլոր ընկերները գրողներ են, գրականագետներ են և այնքանով, որքանով իմ ընկերները ինձ պրոպագանդում են, և կարծես թե

վատ չեն պրոպագանդում... Բայց դա երևի այն չի, ինչ պիտի արվի նորմալ... նորմալ դեպքում, այսպես ասենք՝ նորմալ պայմաններում:

ԳՏԳ – Չէ, ես իրոք առաջին անգամ, գիտես, քո ստեղծագործությունը ռուսերեն եմ հայտնաբերել՝ թարգմանությամբ, շատ վաղուց իհարկե, և ինձ թվում է, այդքան գուցե դա չի պատճառը, բայց նաև պարզապես խորշայնացումը: Այսինքն՝ ինձ չի թվում, որ կա մի արձակագիր, որը ընթերցողների քանակով կամ հայտնիությամբ քեզ սկզբունքորեն գերազանցեր այսօր Հայաստանում ժամանակակիցների մեջ: Ուղղակի ընկերական շրջապատները տարբեր են, դա իրոք այդպես է, դրանք խորշայնացած են, այսպես ասած, և այդպես... Բայց հիմա դառնանք քո առաջին թեզին, որ ասեցիր պատմվածքի. տերտերի նկատմամբ անվստահությունն է: Ես շատ ավելի խորհրդանշական եմ ընկալել դա, որովհետև ոչ թե տերտերի, այլ աստծո նկատմամբ անվստահությունը...

ՄՀ – Դե, ըստ էության՝ հա՛: Եթե հաշվենք, որ աստծո փոխանորդն է, այսպես ասենք, տերտերը...

ԳՏԳ – Հա՛... Չէ, այսինքն՝ ես ո՞նց հասկացա, որ նա տարիներ շարունակ ասել է «Մեղքերդ քավիր՝ քեզ լավ կլինի», կոպիտ ասած՝ լավը կգա: Էս կինը արել է, արել է, տեսել է՝ լավը չի գալիս, եկել է, ասում է. «Հետ տուր, իզուր էիր ինձանից ուզում, որ ես իմ մեղքերը քեզ հանձնեմ» - այդպես եմ ընկալել, էլի: Այսինքն՝ մեծ հիասթափություն կյանքի կառուցվածքի մեջ: Դա է ընկալվում. ավելի ողբերգական պատմություն:

ՄՀ – Այստեղ հիմա իմ ասածի և քո ընկալածի միջև տարբերությունը մասշտաբն է: Քո դեպքում մասշտաբը մի քիչ ավելի մեծ է: Ճիշտն ասած, անկեղծ ասեմ՝ այդպես ավելի սիրուն է հնչում, բայց ես գրելուց եղ նպատակը չեմ ունեցել: Հա՛: Այնպես որ շատ է լինում. և՛ գրականագետները, և՛ ընթերցողները երբեմն այնպիսի լուսավոր բաներ են ասում իմ գործերի մասին՝ կարդում ես իրենց ասելուց հետո, հասկանում ես՝ այո՛, դա ճիշտ է: Բայց անկեղծորեն ասեմ՝ ես գրելուց չեմ էլ մտածում, թե ի՛նչ եմ գրում, թե ի՛նչ... Այսպես, այս իմաստը հաղորդեմ: Էն, ինչ որ... Ես չգիտեմ՝ մյուս գրողների մոտ դա ո՞նց է՝ իմ դեպքում դա շատ բնագոյային պրոցես է: Հատկապես պատմվածքները՝ կարճ պատմվածքները, պոետները ո՞նց են մի շնչով գրում բանաստեղծություն: Պատմվածքները իմ դեպքում այդպես են, և նույնիսկ այն գործերին, որոնց վերադառնում և աշխատում եմ՝ ինչքան աշխատում եմ, այնքան ավիրում եմ, այնքան ավիրում եմ: Սովորաբար պատմվածքների վրա երկրորդ, երրորդ ընթերցումներին սրբագրական ուղղակի բաներ եմ անում: Ասենք վիպակները, վեպերը մի քիչ ավելի աշխատատար բաներ են, և չեմ կարող գլուխ գովել, որ այդպես մի շնչով գրում եմ, բայց էլի՝ այուժեն, կառուցվածքը և, չգիտես, կերպարները, բանը էլի գալիս են այդպես միանգամից, ուղղակի այնտեղ մի քիչ աշխատանքը շատ է, տաժանակիր աշխատանքը ավելի մեծ է, այսպես ասեմ:

ԳՏԳ – Շատ հետաքրքիր է: Ես ուզում եմ վերադառնալ նախատիպերի հարցին, որովհետև այնտեղ կան նաև պատմվածքներ, որոնք այնքան, էսպես ասած, տիպական կյանքից արտացոլած իրադրություններ են ցույց տալիս, որ էլի ուզում եմ հարցը տալ, թե արդյո՞ք նախատիպով էին, թե՞ ոչ: Ասենք՝ ճամպուրուկի մասին պատմվածքը կանանց խոսակցություն է, երբ մահացել է ընկերուհիներից մեկը, և նրանք նստած են սեղանի շուրջ և փորձում են ժառանգությունը կիսել: Դա շատ, էլի, հետաքրքիր գործ է, ես հիմա կասեմ, ինչու, բայց սկզբից հարցը զուտ էր տիպական դեմքերի մասին է. կա՞ն արդյոք այդ մորաքույրը, հարսը, ընկերուհին: Եվ մյուսն էլ օրինակը բերեմ. Սևան ճամփորդությունը հանգստյան տուն՝ էլի կա ընկերուհի, և բավական դաժանորեն է

ներկայացված: Ասենք, ինքը հաստատ (դա, ինձ թվում է, կյանքից վերցրած է), ինքը չի՞ տեսել, չի՞ մեկնաբանել դա: Ես դա իզուր չեմ հարցնում, որովհետև դեռ Հրանտ Մաթևոսյանն էր ասում, որ ուզում ես մեկի մասին բան ասես՝ պարզվում է քո ազգականն է, բարեկամիդ որդին է, բան, դես, դեն. լեզուդ պապանձվում է: Էդպիսի հարց չկա՞, չի՞ առաջանում:

ՄՀ – Ես ասեմ: Էսպես ամբողջությամբ կերպարը, որ լինի մի մարդ՝ դա էդպես չկա, բայց կերպարում կան գծեր, դեպքեր, հատկանիշներ, գործողության ընթացք, որ, էսպես, ավելի շատ կոլաժային են էդ կերպարները: Նկարիչները ո՞նց են, ասենք, մեկի՝ ժպիտը, մեկի հայացքը, մեկի մազերը և այլն: Ենթադրենք եթե մենք...

ԳՏԳ – Բայց նկարիչները շատ հաճախ դիմանկարներ են անում կյանքից վերցրած մարդու:

ՄՀ – Հա: Գիտե՞ք՝ կյանքից... Ինչ էլ գրես՝ կյանքից վերցրած է: Այ էն... Կոնկրետ իմ դեպքում՝ էն, ինչը ես հորինում եմ շատ ավելի թույլ է լինում, քան ես վերցնում եմ: Վերջին հաշվով՝ կյանքը աստծո հորինվածքն է, և շատ դեպքերում մենք արձանագրում ենք, կամ, չգիտեմ՝ վավերացնում ենք, կամ ուղղակի նկատում ենք այն, ինչ արդեն հորինված է: Այն դեպքերը, երբ որ ես ինքս հորինում եմ, դա արդեն, ժողովրդի լեզվով ասած, լինում է «բատրել», և այդքան էլ... Գուցե ընթերցողը դա չի նկատում, բայց իմ աչքին դրանք այնքան էլ համոզիչ չեն, այնքան էլ տեղին չեն, և նաև ավելորդ աշխատանք են, էլի: Էն, ինչը այսպես փայլուն մտածված է, կարելի է ընդամենը արտագրել կյանքից, այսպես ասեմ:

ԳՏԳ – Լավ, բայց էդ ընկերուհին չկա՞ր, որը մկներից վախում է, որը ասաց. «Էս ինչի՞ ես ինձ գրել ես պատմվածքի մեջ», թե՞ իրանք չեն կարդում: Ես հաստատ գիտեմ, որ էդ մարդը կա...

ՄՀ – Գիտեք, ես ասեմ: Ողջ մարդկանց մասին մի քիչ վտանգավոր է, ողջ ընկերուհիների: Սովորաբար բան է, չէ՞, մահը շատ-շատ հարցեր է իրենց տեղը դնում, և մարդու բացակայությունը թույլ է տալիս ավելի անկեղծ լինել: Ոչ թե որ դու վախենում ես, այլ որ չես ուզում (– իրեն ցավ պատճառել) ցավ պատճառել մարդուն, ով քեզ նվիրված է, և այն մարդն է, (– Այո՛, այո) որ ճանապարհի ընկեր է, դու իր հետ հանգստանալու ես գնացել, ու ստացվում է՝ հերիք չի պատմվածք ես գրում, մի հատ էլ ասում ես. «Այ տեսեք, սա այն մարդն էր, որը այ այսպես...»: Դրա համար ինչ-որ բաներ, հա՛, այդտեղ կան, և առհասարակ ես չունեմ այդպիսի գործ, որ ամբողջությամբ իմ հորինումն է: Էլի եմ ասում, այսպես պատառներ՝ այստեղ, այնտեղ, երևի հենց դա է գրողի աչքը, որ դու տեսնես տվյալ... տվյալ իրավիճակում ի՞նչն է գրական նյութ, ի՞նչն է ավելի արժեքավոր էդ պահի մեջ չէ՞:

ԳՏԳ – Էդ որտեղի՞ց է քեզ մոտ էդ գրողի աչքը առաջացել:

ՄՀ – Դե ես էլ չգիտեմ ճիշտն ասած: Ես էլ կուզենայի իմանալ, որովհետև մարդիկ, ովքեր իմ հետ շփվում են, ասում են, որ ես կյանքում շատ ավելի կոպիտ եմ, երբեմն, բռի, քան իմ գրականությունն է: Եվ ունեմ ընկերուհի և ունեմ ազգականներ, որ զարմանում են, թե «Էդ նուրբ գրականությունը դու ո՞նց ես ստեղծում», որովհետև պահի տակ, ասենք, կարող ես մարդու երեսին շարտել ցանկացած բան, կամ ասել. «Ես քո հավեսը չունեմ, ռադ էդի գլխիցս», և այլն: Հա՛, բայց գրականության մեջ էդ բաները չեն գալիս՝ խցկվում և գալիս է այն, ինչ պիտի գա, ինչ տրված է, այսպես ասեմ:

ԳՏԳ – Էդ շատ հետաքրքիր հանգամանք է: Ես ուզում եմ ճամպրուկի դեպքին անդրադառնալ նորից, որովհետև ես ասացի, որ նովել են իմ համար, էն կլասիկ, Գրիգոր Զոհրաբյան իմաստով, որ հայ

գրականության մեջ շատ քիչ կան: Որովհետև այդտեղ տեսնում ես եղ պրոֆեսիոնալ ատաղձը կառուցվածքի: Ու եթե դու ասում ես, որ «Միանգամից եմ դա տեսնում»՝ ինձ համար էլ դա շատ հետաքրքիր է, որովհետև ստացվում է, որ, ասենք, բարդ է կառուցվածքը, ասենք՝ պապի ժառանգություն տունը վաճառելու պատմվածքը. առաջին մեկուկես էջը, որ կարդում ես՝ չես հասկանում ինչի մասին է խոսքը, որովհետև իրենք խոսում են մի բանի մասին, որ դու դեռ տեղյակ չես, որ ասում է. «Էսինչ պարտքերս կփակեմ», բան... Ինչ է լինելու՝ հետո է պարզվում: Եթե դու եղ կոմպոզիցիան նույնպես միանգամից ես տեսնում, դա շատ հետաքրքիր է, որովհետև բարդ կոմպոզիցիոն բան է, նույնիսկ փոքր ժանրի մեջ, բայց բարդ կոմպոզիցիոն իրադրություն միանգամից տեսնելը շատ դժվար է:

Եվ ես առումով ինձ ի՞նչն էր հետաքրքիր. որ հաճախ եղ նովելի, ասենք, իմ բերած օրինակներում եղ տերտերի կամ եղ գյուղում տուն ունեցող մարդու պատմվածքներում վերջին տողն էր իմաստությունը և նովելի էությունը, որ խորհրդանշական, իմաստուն ինչ-որ բան է բացվում, ինչ-որ խնդիր, ինչ-որ ողբերգական իրադրություն: Իսկ կան գործեր, ինչպես, օրինակ, ճամպուրկը, որտեղ ուրիշ է խաբկանքը, այդ ընթերցողին այուրպրիզ ընծայելը ուրիշ բանում է, որ թվում է, թե պատմվածքը մի բանի մասին է, հետո պարզվում է, որ լրիվ ուրիշ բանի մասին է: Ուրեմն՝ եղ ընկերուհիների խոսակցությունները, որ ես սկսեցի լսել... կարդալ... (լսել. տե՛ս, այնքան բան էին, որ «լսում էի»)... ուրեմն, մտածում էի. «Ի՞նչ ամոթ, էլի եղ մեր, ուրեմն, բամբասող... մարդը մահացել է, ինչո՞վ են զբաղված, ուզում են մաշիկները միմյանց մեջ բաժանել»: Էսպես ասած՝ կենցաղագրական պատկեր էր սենց, հա՞, սոցիոլոգիական ոնց որ ինչ-որ բան լինել՝ կտրվածք լինել: Հետո պարզվում է, որ դրա հետ կապ չունեցող բանի մասին է. ճամպուրկը, որ չեն կարողանում բացել կնոջ՝ մահացած կնոջ ժառանգության հետ միասին, որ ինչե՞ր կա մեջը՝ չգիտես, որը դառնում է խորհրդանիշ, որ այդ կինը իր կյանքը ապրել է փակ, որ նա իր ներքինը չի բացահայտել, իր հոգին չի բացահայտել, և այդպես էլ գնում է՝ թողնելով մի անհայտություն, թե ինքը ո՞վ էր: Եվ այդ կանայք, որ ուզում էին բաժանել ժառանգությունը, դա ընդունում են ինչ-որ չափով, ձեռք են քաշում: Ու շատ գեղեցիկ է նաև այն, ինչպե՞ս են այդ տղամարդիկ գալիս, ամեն մեկը փորձում է բացել, հետո ատաղձագործն է, դարբինն է, չեմ հիշում էլ՝ փականագործն է, հետո գողն է գալիս՝ գյուղի գողը, որը փորձում է, էլի չի կարողանում բացել: Ու տղամարդիկ են գալիս կնոջ հոգին բացելու, ես եղ խորհրդանիշն եմ տեսնում դրա մեջ: Ժանրը այսպիսին է. մի բանի մասին պատմություն, թվում է, թե ուրիշ, նույնիսկ կատակերգական, հետո՝ լրիվ ուրիշ մակարդակի խորհրդանշանացում: Իմ էս ասածը կա՞, դու դա զգացե՞լ էս գրելիս, թե՞ էս հիմա մեկնաբանեցի լրիվ ուրիշ ձևի:

ՄՀ – Դե մեկնաբանողները միշտ ավելի գեղեցիկ են մեկնաբանում: Ուրեմն, ներողություն, պատմվածքը... իրական հիմքը որքանո՞վ է պատմվածքում: Մեր հարազատներից մեկը երբ որ մահացավ՝ բավականին ունևոր կին էր, բավականին թանկարժեք շորեր ուներ: Սովորաբար իրոք այնպես է, գոնե էն Սևանի ավազանի գյուղերում, որտեղ ես ապրել, մեծացել եմ և որտեղ շփումս շարունակվում է, էդպես է. մահացածի շորերը բաժանում են, ում ինչ պետք է: Երևանում ուղղակի հավաքում, տանում են եկեղեցի, էստեղ եկեղեցին բաժանում է՝ ովքեր դրա կարիքը ունեն: Եվ էն մեր բարեկամի մահից հետո իր հարսը որոշեց, որ «Ինչի՞ էսքան թանկարժեք շորեր տամ սրան-նրան, կարելի է վաճառել»: Եվ դա ցնցում էր բոլորի համար. «Վա՛յ, ի՞նչ ամոթ, վա՛յ, տե՛ս՝ մեռելի շորերը վաճառում են» և այլն, և այլն:

ԳՏԳ – Էղ հետո էլի կա քո մոտ «second-hand»-ում, էղ մեռելի շորի հարցը:

ՄՀ – Հա, հա: Որովհետև... հա, դա մի քիչ այսպես այլ տեսակ սարսափ էր: Երկրորդ իրական մասը՝ բոլորովին այլ կին էր, ինձ հեռավոր ծանոթ, որ կապ չուներ, նույնիսկ առօրյա էսպես բարև, բարի լույսի մակարդակով շփում չկար: Ինքը մահացավ, և այսպես բոլորիս թվում էր, թե ինքը ունի էդ երկու երեխան, ինքը ունի էդ բարեխիղճ ամուսինը, շատ տեղը տեղին ընտանիք են, բան: Եվ մահացավ ու հանկարծ պարզվեց, որ ինքը ինչ-որ տեղ երկու երեխա է թողել սկեսուրի մոտ, և սկեսուրն է պահել-մեծացրել, ինքը էս է արել, ինքը էն է արել: Եվ էդ փակությունը, որ մարդը կարող է այդպիսի բան ապրած լինել, և էդ ծանրությունը իր խղճին ինքը կարող է ժպտալ, կարող է չգիտեմ, աչքեր ներկել, չգիտեմ, շուկա վազել շոր գնելու և այլն, այդ թեթևությամբ և այդ ծանր անցյալով, հա՛, դա ինձ համար մի քիչ ապշեցնող էր, և այդ վերջում, որ... Թեև բոլորիս կյանքն էլ՝ մեկինը մի քիչ ավել, մեկինը մի քիչ պակաս, բոլորիս կյանքն էլ ունի իր փակ էջերը, որոնք երբեք չեն բարձրաձայնվում կենդանության օրոք, և երբեք գուցե հետո այդպես էլ չեն պեղվում, այսպես ասեմ: Նայած ո՞նց ես ապրում, ինչքան, ինչքան հմտորեն ես թաքցնում այդ բոլորը, և իմ հերոսուհին հենց այդ հմտորեն թաքցնող, էսպես, իր անցյալը տեղը տեղին գրիմավորած կին էր, որը եկավ և էդպես մտավ իմ պատմվածքի վերջաբան:

ԳՏԳ – Շատ հետաքրքիր է, շատ շնորհակալություն, որովհետև այ սա խոհանոցը բացել էր նշանակում: Եվ ես ուրեմն ինչ որ չափով ճիշտ էի, որովհետև երկու պատմություն է իրար դրվել:

ՄՀ – Ըստ էության՝ այո:

ԳՏԳ – Հիմա. սա շատ հետաքրքիր դեպք է: Ինչո՞ւ. որովհետև սովորաբար երկու պատմություն, երբ երկու ժանր իրար է դրվում՝ դա արվում է կամ, էսպես ասած, նպատակով՝ ժանրը քայքայել նախ, նախկին, որից սկսվել է գործը, ցույց տալ դրա սահմանափակությունը: Դա արդեն պոստմոդեռնիզմի պրիոմներից մեկն է: Ասենք՝ Տարանտինոն է անում էն ֆիլմում, որը կոչվում է «Լուսաբացից մինչև...» բանից՝ էդ «Իրիկնամուտից մինչև լուսաբաց», [«From Dusk till Dawn»](#): Դա էն... բանը, կինո է, որը սկսվում է որպես թրիլլեր, դետեկտիվ, հետո դառնում է սարսափ կինո – ужасник, կտրուկ կերպով: Շատ հայտնի օրինակ է կինոյի ասպարեզում ժանրի կոտրելու: Դե Տարանտինոն ընդհանրապես դա սիրում է անել: Էն նացիստների մասին [ֆիլմում](#) էլ, երբ հրեաներն են սկսում վրեժ լուծել նացիստներից: Մի այլ դեպք... Ուրեմն՝ դա նրա համար է, որ ժանրը կոտրեն՝ նախորդը: Մյուս դեպքը ասենք, որ մտքիս է գալիս, դա Ստրուգակինների հայտնի գործն է՝ «Մահացած ալպինիստի...» կամ «Ձոռիված ալպինիստի հյուրանոցը»¹, որտեղ էլի սկսվում է որպես դետեկտիվ, հետո դառնում է ֆանտաստիկա: Էստեղ իրենք միշտ համարել են, որ դա իրենց անհաջող գործն է եղել, չկարողացան իրագործել էդ, իրենց կարծիքով: Չնայած՝ մեկ է, շատ լավ գործ է, մի քանի անգամ կինոնկար է նաև հանվել, բայց չկարողացան իրագործել, իրենց կարծիքով, էդ անցումը:

Հիմա քեզ մոտ ի՞նչն է ստացվել. որ էդ կենցաղագրական պատմությունը, ավելի էդ հումորային ու քննադատական նոթերով, դարձել է փիլիսոփայական, միավորվել է, և ընդհանրացում է ստացել, և իրան լավ բռնել է: Չես զգում էդ կարկատանը, որ մի պատմությունից մյուսին է անցնում, ընդհակառակը՝ դա սյուրպրիզ է, բայց շատ լավ նախորդն էլ է բացատրում, որ «էս ամբողջ անցուդարձը ավելորդ էր»:

¹ [Հյուրանոց «Ձոռիված լեռնագնացի մոտ»](#)

ՄՀ – Իհարկե, եթե գրականության օրինակներով դու ինձ բացատրեիր, քան կինոյի, էդպես ինձ համար ավելի ընկալելի կլիներ: Բայց, երբ որ դու գրում ես, չես... նախապես չես որոշում. բեր ստեղծեմ այնպիսի մի գործ, որ ժանրը կտորի: Բեր ստեղծեմ այսպիսի...

ԳՏԳ – Նայած:

ՄՀ – Հա, չէ, ես...

ԳՏԳ – Մարդ կա, որ էդպես էլ ուզում է արած լինի:

ՄՀ – Էդ դեպքում արհեստական է լինում և չի հաջողվում հիմնականում, գոնե իմ դեպքում էլի: Ես չեմ կարող նախօրոք պլանավորել. այ սա եմ գրում: Հա, ունեմ ընկերներ, որ, ասենք, զանգում եմ, ասում են. «Օ՛, իմ գրելու ժամն ա, կլինի՞ մի ժամ հետո ես քեզ զանգեմ»: Դա էլ ինձ համար ոչ միայն տարօրինակ՝ ծիծաղելի է, որովհետև գրելու ժամը որպես այդպիսին... գուցե դա պրոֆեսիոնալ թերություն է, որովհետև արձակագիրները բոլորը ժամերով նստել, գրել են և նստում, գրում են, եթե ուզում ես քիչ թե շատ պիտանի բան ստացվի: Կոնկրետ իմ դեպքում այդպես չի՝ ես չունեմ գրելու ժամ, ես... Իմ գրասեղանը շատ փոքր է՝ երևի սրա կեսի չափ: Էդպես է, երբ ինքնաբուխ ինչ-որ բան կգա՝ կգրեմ, չի գա՝ ես էդպես նպատակ չունեմ՝ գրեմ էսպիսի ցնցող մի բան: Իհարկե, լավ կլինի, որ վերջնական արդյունքում գրես էնպիսի մի բան, որ նորույթ է, որ քեզանից առաջ ոչ մեկը չէր արել, բայց նախապես էդպես երբեք չեմ պլանավորում, որովհետև...

ԳՏԳ – Դե ինձ համար, կներես, խոսքդ կտրեմ, կշարունակես, բայց էդ նորույթը դա նովելի էս ժանրն է նախ և առաջ էս նյութի վրա, որովհետև հայ գրականության մեջ շատ քիչ կա էսպիսի ավարտուն... Ավելի շատ կա քնարական զեղումներով, անձև... Իսկ քեզ մոտ շատ ավարտուն ատաղձներ են, կմախքներ են էդ նովել-պատմվածքների: Շատ... Դա ինձ համար ամենագլխավոր նորույթն է:

ՄՀ – Շնորհակալ եմ:

ԳՏԳ – Հա, խնդրեմ, խոսքդ կտրեցի էլի, բայց...

ՄՀ – Հա, չէ, չէ: Ես ընդամենը դա էի ասում, որ ինձ մոտ աշխատանքը չսիստեմավորված է: Ուրիշ բան, երբ որ ես գրել եմ վեպը, ենթադրենք, կամ վիպակը, և արդեն պետք է ինչ-որ շտրիխներ ավելացնել, պակասացնել և այլն: Իհարկե, դա աշխատանք է՝ զուտ ֆիզիկական աշխատանք է, որ պիտի համբերություն ունենաս, նստես, էսպես, էդ կմախքի վրա միս ավելացնես, անոթ ավելացնես, բայց կմախքը ինքը պիտի լինի, որ դու դրա վրա աշխատես:

ԳՏԳ – Այսինքն դու արդեն տեսնում ես կմախքը, հետո նոր դա իրագործում:

ՄՀ – Կմախքը, երբ որ գալիս է արդեն՝ դու դա գրում ես, հետո դու ինքդ գիտես՝ կկոտրես, ուղիղ կպահես, կծոնես, չգիտեմ՝ վիզը շուռ կտաս, էդ դա արդեն քո գործն է՝ դու քո աշխատանքի ընթացքում ինչ տեսք կտաս: Բայց էն հիմնական բանը՝ հիմնական կմախքը, գոնե իմ դեպքում, և կարծում եմ՝ ցանկացած նորմալ արձակագրի, գրողի դեպքում՝ դա էդպես է: Պիտի ինքնաբուխ լինի, որովհետև դգել-փչելով իհարկե այսօր կան... Նույնիսկ ընթերցողների մի խումբ կա, որը այնքան հմուտ է և այնքան պրոֆեսիոնալ է գրականության մեջ, որ կարող է, գիտի պատմվածքի օրենքները, գիտի վեպի օրենքները, ունի գրականագիտական որոշակի գիտելիք և կարող է նստել ու գրել, շարադրել, և դա ստացվի տպագրելու արժանի, ոչ այնքան անպետք մի բան: Բայց դա էն գործը չի, որ ընթերցողին դուր կգա, կհիացնի կամ կզարմացնի:

Եվ պիտի ասեմ, որ մի ժամանակ ես գրում էի այն ամենի մասին ինչ ինձ հիացնում էր: Հիմա իմ ճաշակը մի քիչ փոխվել է տարիքի հետ, կյանքից նյութ ընտրելու ճաշակը, էսպես ասեմ: Հիմա ես միայն գրում եմ: Էն բաներն են ինձ ստիպում գրասեղանին մոտենալ, որոնք ինձ զարմացնում են, որոնք ինձ ապշեցնում են, որոնք ես... չէ, անսպասելի են՝ ես չէի սպասում, բայց այ, տես՝ կյանքը էսպիսի շրջադարձ էլ ունի: Եվ երևի հիմնական պատճառներից մեկը դա է, որ սկսել եմ քիչ գրել, թեև նաև քիչ եմ գրում էն պատճառով, որ արդեն ծավալուն գործեր եմ գրում: Արդեն դեպի ծերություն եմ գնում և վեպը, վեպը, վեպեր եմ գրում, էսպես ասած:

ԳՏԳ – Վեցը գիրք ունես հրատարակած, դա քիչ գրել չի:

ՄՀ – Ութ գիրք, ութ գիրք ես կասեի:

ԳՏԳ – Ութ գիրք: Ես վեցը գիտեի՝ սխալվեցի, էն էլ ոչ մեկը չեմ տեսել, բացի սրանից: Էն էլ չէի տեսնի, եթե չնվիրեիր ինձ: (- Հա): Շատ կարևոր է, որ սա տեսնենք, հետո կխոսենք մի քիչ էլ: Հիմա՝ քո էր...

ՄՀ – Ասեմ, ներողություն...

ԳՏԳ – Հա, ասա: Իհարկե:

ՄՀ – Եվ մեր դասական գրականությունը և համաշխարհային գրականությունը հիմա էնքան հարուստ է, էնքան շոշափված թեմաներ կան, որ համարյա չշոշափված բան չկա, որպեսզի դու մտածես. «Այ սա անեմ և մարդիկ իմանան այս մասին, և մարդիկ զարմանան»: Այսինքն գրականությունը ինչ-որ տեղ շատ... դա ազնվացրել է գրականությունը: Այսինքն, դու արդեն էլ, այսպես, ընթերցողի առաջ կոտրատվելու տեղ չունես, քեզանից առաջ ամեն ինչ արված է: Դու պիտի անես էն, ինչը հարազատ է քեզ, ինչը դու հարկ ես համարում անել ոչ թե մարդկանց զարմացնելու համար, այլ քո հոգեկան բավարարվածության համար. քո գրի, քո այբուբենի անգամ առջև, որից դու օգտվում ես, և էն լեզվի հանդեպ պարտքի գիտակցումից ելնելով. գրում ես միայն էդ պահերին, որ դու պարտք ես կատարում քո լեզվի հանդեպ, դու պարտք ես կատարում քո ճակատագրի... Նաև քո ճակատագրին պարտք չես մնում՝ դա ամենա-, ամենացավոտ բանն է, երբ դու պարտք ես մնում քո ճակատագրին, երբ դու պիտի ինչ-որ բան անեիր, բայց չես անում:

Մեր ժողովուրդը մի խոսք ունի չէ՞: Ասում է. «հոգու պարտք» - դա իմ հոգու պարտքն է՝ ես պիտի անեմ: Այսինքն՝ ոչ թե հանուն ինչ-որ մեկի. երբ դու արդեն մտածում ես քո հոգու և նրա հանդեպ ունեցած պարտքի մասին՝ դա ամենաանկեղծ մղումն է, և եթե գրականությունը էդ մղումից չի ստեղծվում, իհարկե տպագրվում է, իհարկե կարդացվում է, բայց դա էն չի, ինչ պետք է էսօր գոնե ինձ: Որպես ընթերցող անգամ եթե խոսեմ՝ դա այն չի, ինչ պետք է այսօր:

ԳՏԳ – Շատ գեղեցիկ և կարևոր բաներ ասացիր: Ես ուզում եմ անցնել, էդ, առանց քննարկելու էս մասը, բայց դրա հետ կապված... Այ, ասացիր՝ կմախքի «վիզը ծռել», մինչև էդ էլ ասացիր՝ «երբեմն մոտիկները կարող են ինձ ավելի բոլի համարել, քան գրականության մեջ եմ արտացոլվում»... Ուզում եմ անցնել դաժանության թեմային:

ՄՀ – Ըհր:

ԳՏԳ – Քո գրածները և քո հիմնիկվա խոսքը նույնպես, էսպես, ես կասեի՝ անսքող տղամարդկային դաժանության դրվագներ ունեն բավական շատ, իրենց... ստեղծագործությունների մեջ, նաև էր: Դրա համար ասենք՝ սա անհնար է համարել կանացի գրականություն կամ ինչ որ բան, հա՞:

ՄՀ – Փափկասուն... փափկասուն գրականություն:

ԳՏԳ – Մա, և նաև, ասենք, կնոջ և տղամարդու հարաբերությունների հարցը այնպես հստակ և անսքող ես ներկայացնում, ինչպես որ՝ կապ չունի, թե հեղինակը ինքը ի՞նչ սեռի է պատկանում:

Ուրեմն՝ դրա հետ կապված էլի ուզում եմ կոնկրետ պատմվածքներով գալ, և այստեղ կան տարբեր ձևեր, տարբեր դեպքեր իրադրության: Վերցնենք «Հումուս» պատմվածքը, որը էլի շատ կարճ գործերից մեկն է: Եվ ի՞նչն էր այնտեղ հետաքրքիր. որ կոպիտ ասած՝ բռի մարդ է, որը երեք անգամ նստել է, և դու կարող ես... Ես հիշել եմ, հա՞, հատուկ չեմ աշխատել, ուղղակի հիշվել է, որ առաջին անգամ նստել էր, կարծեմ, դանակահարության համար, երկրորդ անգամ՝ նարկոտիկի, երրորդ անգամ՝ ինքն ասում է, թե արդեն անմեղ տեղը: Հետաքրքիր շարք է: Ու քանի որ ազգական է՝ չեն կարող իրեն չհրավիրել, ու ինչքան հիշում եմ՝ կնոջը և երեխաներին ծեծելով է հայտնի: Բայց չեն կարող չհրավիրել, երբ եկել է այն կիսաազգական-կիսաբարերարը արտասահմանից, որը, եթե չեմ սխալվում, Թոխմախում տարածք էր գնել ու ասում էր. «Մենք բոլորս պիտի այստեղ թաղվենք»: Բայց էդ բարերարն էլ շատ կարևոր է, որովհետև գիտեն, որ ինչ լինի՝ միշտ իրեն կարելի է դիմել, դրա համար էս հարզանքի տուրքն են մատուցում:

Եվ հանկարծ էդ բռի մարդը վեր է կենում ու ասում է մի բան, որ բոլորը կարծում են, որ ինքը չգիտի: «Գիտական տերմին», էսպես ասած: Ասում է. «Դու չես կարող շիրիմ ունենալ էս հողի վրա, դու հումուս ես դառնալու, որովհետև ո՛չ այստեղ ապրել ես, ո՛չ աշխատել, ո՛չ կովել, ո՛չ, էսպես ասած, հոգիդ... հոգուդ պարտքը կատարել» քո խոսքը օգտագործելով: Էդ «Հումուս» պատմվածքն է:

Հիմա՝ ի՞նչն է էստեղ... Ու կինը ձեռքը բերանին է տանում զարմացած, որ իր ամուսինը կարող է էսպես բաժակաճառ, էսպես բառ օգտագործել: Եվ «նեգատիվ բաժակաճառ» է դա հա՞: Էդ էլ հետաքրքիր ժանր է, որ քիչ է պատահում:

ՄՀ – Հա:

ԳՏԳ – Ուրեմն էդ մարդը բռի՞ էր, թե՞ իրա կյանքի ճակատագիրն էր էդպես: Այսինքն երբ նստելու պահերն էս նայում... ու դու շատ ժլատ, ժուժկալ բառեր ես ասել դրա մասին, շատ չես խորացել: Նստելու դեպքերը երբ նայում ես՝ կարող ես հասկանալ, որ սա անմեղ տեղը, կոպիտ ասած, ընկած-հելած անձ է: Բայց, որ ասում է «կնոջը, երեխեքին է ծեծում», արդեն մեջդ իրոք նեգատիվիզմ է առաջանում դեպի կերպարը, հա՞: Ու հետո, որ նա դա ասում է՝ էս որպես ընթերցող ընկնում եմ տվյալանքի մեջ. այսինքն ինքը դա ասում է իրո՞ք այդպես զգալուց, ինքը իրո՞ք այդպես զգում է, թե՞ ինքը ձևական է անում դա:

ՄՀ – Ինքը չարություն է անում, հա՞:

ԳՏԳ – Հա: Այսինքն՝ փչացնու՞մ է հերթական անգամ իմաստությունը, որը մեզ մոտ շատ ընդունված է, և էս ժամանակներում շատ ընդունված է: Թե՞ ինքը... Ու եթե ինքը իրականում է դա ասում, ապա նա ամբողջական կերպար է (- Ըհը) իր հակասությամբ: Թե՞ անմեղ տուժած է, և այդ դեպքում կնոջը, երեխաներին ծեծելն էլ ուղղակի ինչ-որ էդ պոռթկման, էդ ինչ-որ իրան... չկարողանալ քեզ պահել, ինչ-որ դրա արդյունք են, էդ կյանքի ճակատագրի արդյունք են...

Այ էդ հարցն է առաջանում, ու ինձ թվում է՝ էս նովելի բանը էդ է. գլխավոր հարցը՝ ինչպե՞ս էդ կերպարին մեկնաբանել:

ՄՀ – Ճիշտն ասած էր կերպարին մեկնաբանելու համար կարող եմ ընդամենը մի բան ասել. որ ինձ համար էս հողի վրա ապրող ցանկացած խուժան ավելի արժեքավոր է, քան Հայաստանից դուրս ապրող որևէ միլիոնատեր: Դա, չգիտեմ՝ ճիշտ եմ, սխալ եմ, դա իմ համոզմունքն է: Եվ եթե մարդը ապրում է, էնքան գիտակցություն ունի հայրենի հողի, արմատների, չգիտեմ՝ տիեզերքի հետ իր ճիշտ կապի և այլնի կառավարման մասին, որ ամենա... միակ տեղը, ուր մարդ կարող է երջանիկ լինել՝ դա իր հայրենիքն է: Եթե մարդը ունի էդ գիտակցությունը, արդեն ինձ համար կարևոր չի՝ ինքը քանի անգամ է նստել բանտ, քանի բանկ է թալանել, քանի մարդ է սպանել՝ ինքը արդեն ինձ համար արժեքավոր տեսակ է: Եվ էդ տեսանկյունից, հենց էդ տեսանկյունից էլ նայել եմ, որ «Իմ ինչի՞ն են պետք ձեր միլիոնները, եթե դուք էստեղ պիտի գաք ընդամենը թաղվելու»: Չէ որ էդ գերեզմանն էլ, էսպես ասենք, շփման եզր է քո հայրենիքի հետ, քո տիեզերքի հետ, քո ճակատագրի հետ, նաև քո կենսագրության հետ: Երբ կենսագրությունդ մի այլ տեղում է, իսկ գերեզմանդ՝ մի, էդտեղ կա, չէ՞, իմ վեպում էս նույն միտքը ես հայտնել եմ, և դու էդպես երկատված ես, դա արդեն դառնում է (– Խաչքարը նկատի ունես...?) ոչ ամբողջական, դա՛ կիսատ-պռատ, չգիտեմ, անխելք մարդու ապրած կյանք: Էդ առումով՝ էդպես է, բայց թե ի՞նչ է հաղորդում էդ պատմվածքը ընթերցողին, ի՞նչ լիցքեր՝ էդ արդեն չեմ կարող ասել:

ԳՏԳ – Ես շատ կուզեի, որ ես էլ էդպես զգայի, բայց ես էդպես չեմ զգում: Մարդը, որը, չգիտեմ, գող է, մարդասպան է և այլն, ուզում է էստե՛ղ ապրի, ուզում է դրսու՛մ ապրի, եթե նա այստեղ է ապրում՝ մանավանդ և գող է ու մարդասպան է, դա (էլ ավելի վատ)...

ՄՀ – Չէ, դա մեկ այլ արատ է: Դա մեկ այլ արատ է, բայց պակաս կարևոր, պակաս փոքր արատ է ինձ համար... Քան էն, որ դու կարող հենց այնպես, երկու շոր ավել հագնելու համար, ենթադրենք, կամ չգիտեմ՝ մի մեքենա, լավ մեքենա քշելու համար հավաքես քո եղած-չեղածը, երեխաներիդ էլ հետը չէ՞, չէ որ նաև նրանց ճակատագրի բեռն է քո ուսերին՝ էդ պատասխանատվությունը, և էդպես վեր կենաս, գնաս ինչ-որ տեղ: Խոսքս էն սփյուռքահայերի մասին չի, ովքեր տասնհինգ թվին մի կերպ-մի կերպ իրենց կյանքը փրկել են, կամ նրանց սերունդների մասին: Խոսքս էն մարդկանց մասին է, ովքեր էսօր գնում են Հայաստանից, երեք ամիս ապրում են էդ գարշահոտ Ռուսաստանում, հետո գալիս են ու հայերենը արդեն մոռացել են. տեսե՛ք, տեսե՛ք: Եվ. «Վայ, ո՞նց եք ապրում էստեղ»: Իհարկե լավ ենք ապրում, որովհետև ձեր նմանները արդեն մեր կողքին չեն, էսպես ասենք, և մեր միջավայրը ահագին մաքուր է: Չեմ մեղադրում գիտնականներին, որ գնում են դուրս, նկարիչներին: Արվեստագետներին չեմ մեղադրում, և նույնիսկ դա ինչ-որ տեղ անհրաժեշտ եմ համարում, որովհետև դա էլ մեր ժողովրդի շփումն է աշխարհի հետ, չէ՞: Հենց իրենք պիտի մեր ժողովրդին ներկայացնեն աշխարհին: Քանի որ մեր երկիրը էնպիսին չի, որ աշխարհը գա դեպի մեզ՝ ուզած-չուզած մենք պիտի գնանք դեպի աշխարհ, և դա պիտի արվի մեր մեծություններով՝ ոչ միայն դասականներով, այլև այսօր ապրող մեծություններով, որոնք իրոք ազգի դիմագիծ են կերտում: Բայց էն մնացած մարդիկ, ովքեր, ասենք, էստեղ էլ ընդամենը տասնամյա կրթություն ունեն, ասում են. «Էստեղ ապագա չկա»: Ես չեմ պատկերացնում, ասենք, Ամերիկայում կամ Եվրոպայում ինքը ի՞նչ ապագա է պատկերացնում իր անգրագիտությամբ: Էդպիսի մի բարեկամ էլ ունեինք, վաթսուն տարեկան կին էր, սրճարանում աման էր լվանում, ու գնաց, իհարկե: Էնտեղ էլ է նույնը անում, ուղղակի էստեղ ցերեկով էր աման լվանում, էնտեղ՝ գիշերը թաքուն է աման լվանում, որ իրեն չբռնեն ապօրինի աշխատելու համար: Ասում էր. «Էստեղ ապագա չկա»: Դե վաթսուն տարի անգրագետ ապրել ես՝ չես կերտել քո ապագան, ես չեմ հասկանում՝ դրանից հետո էդ ինտելեկտով

² «Ազրավները Նոյից առաջ» վեպում խաչքարի դրվագը:

դրսում ի՞նչ ես կերտելու, որ էդպես... հա: Մի խոսքով. երկար գրուցելու բան է: Էսպես ասեմ. համենայն դեպս գուցե ես երբեք դրսում չեմ ապրել, դրսի հմայքները ինձ չեն գայթակղել, դրսի հաճույքներից չեմ օգտվել հենց էդ պատճառով, որ թվում է, թե քեզ ավելին պետք էլ չի. դու քո երկրի վրա ես: Իհարկե մեր պոստենցիալը թույլ էր տալիս մեր ժողովրդին ունենալ շատ ավելի լավ երկիր: Բայց եթե չունենք դա՝ դա էլ հավանաբար միայն մի հոգու մեղք չի:

ԳՏԳ – Ինչ որ պատճառներ կան:

ՄՀ – Բացի էն, պատճառները՝ դա մի հոգու մեղք չի (- Այո) և նաև մեր մեղքն է (- Այո): Էսպես չասենք՝ այ սա, Պողոսը, Պետրոսը: Դա՝ ժողովուրդը հավաքական կերպար է, և եթե ինչ-որ բան ժողովրդի կյանքում էն չի՝ ուրեմն դա բոլորի մեղքն է:

ԳՏԳ – Դա էն թեման է, որ ես կուզեի վեպիդ մասին խոսելիս քննարկել: Չգիտեմ, էս հաղորդման մեջ կտեղավորվենք, թե ոչ, բայց ինձ թվում է՝ վեպդ տալիս է էն մի մասը էն դիագնոզի, որը որ էդ ասածդ է. թե ինչո՞ւ ենք էսպես ապրում:

Բայց դառնամ դաժանությանը, որովհետև ինձ շատ հետաքրքիր թեմա է դա: Ասեմ ինչու. որովհետև պոստմոդեռնիզմի ժամանակաշրջանում դաժանությունը նույնպես արդեն համարվում է հեշտ վերարտադրելի, կարելի գրականության մեջ:

ՄՀ – Բոլոր մանրամասներով նկարագրելի:

ԳՏԳ – Կարող է, այո: Եվ ոչ միայն դա, այլև դա մի մասն է էդ նատուրալիզմի, որը արդեն ընդունվել է:

Բայց մի տարբերություն կա քո գրածի և էդ դեպքերի միջև, որովհետև քո գրածը էսպես գիտնականի հայացք ոնց որ լինի, էսպես՝ բժշկի հայացք, որը նայում է, թե ինչ է տեղի ունենում՝ սառը: Որոշակի տարածք կա դեպքի և հեղինակի հայացքի միջև, այլ ոչ թե... ոչ ըմբռնվում է, իհարկե, և ոչ էլ կորած է մեջը: Այսինքն՝ ոչ էլ կարծում է, որ կյանքը էդպիսին է: Էդ հեռավորությունը կա շատ կարևոր: Հիմա՝ դա և՛ աբլորի վիզ կտրելն է կամ ոլորելը, և շատ աբլորների: Էնքան աբլոր ու երբեմն գառնուկ ես ոչնչացնում էստեղ (գրքի մեջ), կանանց կողմից հիմնականում, որ դա ինչ-որ բան նշանակում է, հա՞:

Բայց գալով էլի պատմվածքներիդ. էն մի դեպքը, որ ես ուզում եմ նշել, էն է, որ պատմվածքը ընդհանրապես չեմ հիշում: Մենակ հիշում եմ թուրքի ականջներից թզբեհը, որը սկզբից երևաց ու վերջում երևաց: Չեմ էլ հիշում ինչի մասին էր: Ես կարող եմ հիմա հորինելով...

ՄՀ – Հա. երբ որ թոռն է մահանում: Հա...

ԳՏԳ – Հիմա կարող եմ, բանը՝ պատկերացնել՝ ինչ կառուցվածք կարող է ունենար, ինչի էր թուրքի ականջի թզբեհը ներս մտնում: Բայց իմ մոտ, երբ որ ես վերջացրի ու հետո մոռացա պատմվածքը՝ դա՛ էր հիշվել: Ու իմ հարցը քեզ հետևյալն է. դու հատու՞կ ուզում էիր նշած լինել թուրքի ականջի թզբեհը, որ դա հիշվի, թե՞ ... թե՞ էդպես ստացվեց:

ՄՀ – Չէ, ես դա հատուկ չեմ նշել: Իրոք էդպիսի մարդ գիտեմ, ով հուշանվեր էր բերել մարտի դաշտից: Իհարկե ես չեմ տեսել՝ պատմելով: Ենթադրենք՝ էսինչի եղբայրը բերել էր էդ հուշանվերը թուրքի ականջներից, և այլն:

Դաժանության մասին. գիտե՞ք, ես ինքս էլ դաժան մարդ եմ: Ես չգիտեմ՝ կա եղպիսի գրող, որ կարող է դուրս թռչի իր ժամանակից կամ իր... իր ապրած... իր ապրած ժամանակից, իր կյանքի ընկալումներից, չգիտեմ, և ինչ-որ բան ստեղծի: Ինչ էլ գրես՝ դա ինչ-որ կերպ անցել է քո ճակատագրի միջով: Եթե դու ինքդ էլ չես ապրել, գոնե լսել ես, տեսել ես, և դա պիտի... քո ժամանակին բնորոշ պիտի լինի: Էդ դաժան... Ավելի դաժան չգիտեմ աշխարհը երբևէ եղել է, քան էսօր է: Սովորաբար, ինչպես ասում է իմ հերոսներից մեկը. «Ես էլ չեմ...»: Գրողներ կան, որ իրենցից բացի ուրիշ դասական չգիտեն: Հիմա ես նույն վիճակում եմ: Ամեն մարդու համար ամենաձանձր իրա ապրած ժամանակն է: Հիմա չգիտեմ՝ իմ մոտ էդ կոմպլեքսն է, որ ես էսօր եմ ապրում և ինձ թվում է՝ ժամանակը երբեք ավելի դաժան չի եղել: Բայց էսօր էդ նույն դաժանությունը մենք տեսնում ենք ամեն տեղ: Եվ երբեմն որպես թերություն ասում ենք չէ՞. «Մենք շատ ենք բարի, մենք շատ ենք քրիստոնյա, այ եղպես պետք չէր՝ էսպես էր պետք» և այլն:

Ըստ էության, էսպես, երբ որ դուք ասում եք «տղամարդկային դաժանություն»՝ ես տղամարդկային ընդամենը մի հատկանիշ ունեմ. տղամարդու պես դանդաղ եմ մտածում: Կանայք կայծակնային են մտածում, որոշում կայացնում: Ինձ համար ամենադժվար բանը, որ...

ԳՏԳ – Կարծրատիպը կնոջ մասին այն է, որ «չի մտածում»: Կարծրատիպ, որ ուղղակի էմոցիան է արտահայտում:

ՄՀ – Իրենք ուղղակի արագ են... Իրենք ուղղակի արագ են մտածում, ի տարբերություն այլ առավելությունների տղամարդկանց հանդեպ: Ես տղամարդու պես դանդաղ եմ մտածում: Ինձ համար դժվարը որոշում կայացնելն է: Եթե ես որոշեցի, որ ինձ պետք է աշխարհը շուտ տալ՝ ես դա կարող եմ անել: Ես իմ ինքնակենսագրականներից մեկում գրել եմ. միայն ֆիզիկան է ինձ համար անմատչելի՝ ես չեմ կարող ֆիզիկա սովորել: Մնացած ամեն ինչը հնարավոր է իմ դեպքում, ես կարող եմ անել:

Եվ էդ դաժանությունը, ես պիտի անկեղծորեն խոստովանեմ, որ եղպես կնոջ չափ փափկասիրտ չեմ, լացկան չեմ, արցունք չունեմ առհասարակ, չգիտեմ եղպես, միայն երաժշտություն լսելիս կարող է ինչ-որ աչքերս լցվի կամ ինձ հուզի, կամ ինչ-որ բան: Բայց եղպես լացկան չեմ:

Եվ կարծում եմ՝ ինձանից շատ լավ քաղաքական առաջնորդ դուրս կգա, որովհետև ինտելեկտը և դաժանությունը քիչ համատեղելի բաներ են: Որքանով ես եմ ուսումնասիրել պատմությունը՝ դա բնորոշ է միայն խոշոր գորավարներին... այսպես: Հիմա եթե, քանի որ գորավար լինելու համար արդեն շատ ուշ է՝ գուցե երբևէ զբաղվեմ քաղաքականությամբ, և իմ էդ հատկանիշը պետք գա:

ԳՏԳ – Ուշ չի: Նույն բանն է, հա՞, նույն բանն է:

ՄՀ – Ուշ չի, հա՛, ըստ էության, հա՛: Ուղղակի նա արյունոտ է, սա մի քիչ առանց արյան, էսպես ասենք:

ԳՏԳ – Դե էն էլ է արյունոտ: Էսօրվա...

ՄՀ – Հա, էսօրվա քաղաքականությունն էլ... Դե արյունն էլ անխելքության հետևանք է: Խելք ունեցող մարդը կարողանում է բոլոր պրոբլեմները իր խելքով և խորամանկությամբ լուծել: Երբ որ մարդու ձեռքը գնաց զենքին՝ դա արդեն... Խոսքը Ղարաբաղի կամ նման դեպքերի մասին չի, երբ ինքնապաշտպանության կամ ասենք սեփական կյանքին վտանգ է սպառնում ու դու ասես. «Օ՛, իմ ձեռքը չի գնա զենքի»: Բայց երբ դու պիտի զենք վերցնես ու գնաս հարևանի տունը ավիրես՝ իհարկե

դա անխելքության նշան է: Էդ տունը կարելի է շատ ավելի այլ եղանակներով ձեռք բերել, էսպես ասեմ, հա:

ԳՏԳ – Դա՛... Լավ, բայց վեպիդ մասին էլի չգիտեմ՝ շատ կխորանանք, թե չէ, բայց բնականաբար էդ դաժանությունը, դաժան պատկերները ենտեղ նույնպես շատ-շատ են: Եվ Վարդենիսի շրջանից ես ինքդ էլ:

ՄՀ – Այո:

ԳՏԳ – Սևան: Եվ ուրեմն իմ հարցը՝ էլի թուրքի ականջի հետ էլ կապված. դու ինքդ շփվե՞լ ես ադրբեջանցիների հետ դեռ քո մանկության ժամանակ: Երբ դուք այնտեղ էիք, նրանք նույնպես այնտեղ էին ապրում, չէ՞, շատ տեղերում: Ի՞նչ էդպիսի փորձ ունես ընդհանրապես:

ՄՀ – Էսպես՝ փորձ ասեմ: Վարդենիսի շրջանում ես ծնվել եմ Կարճաղբյուր գյուղում: Մինչև տասը տարին՝ ինը, տասը տարին, մինչև հորս մահը այնտեղ ենք ապրել, որից հետո տեղափոխվել ենք Երևան: Եվ էդ ընթացքում շփվել եմ այնքանով, որ հայրս ուներ թուրք ընկերներ, թուրք ծառայողներ, որոնք գալիս էին մեզ հյուր և բերում էին, չգիտեմ, իրենց հացն էր կարծեմ՝ էսպես փայլուն: Իրենք հացի վրա յուղ էին քսում, բան, փայլուն գաթայի նման երեսով, բայց ուտում էիր՝ ինքը անհամ էր, հաց էր, էդպես: Բայց հորս մահից հետո էլ կապը կտրվեց: Ես էլ էդ ընկերներին մեր տանը չտեսա: Չտեսա նաև էն պատճառով, որ իմ հայրը գոհվեց վթարից՝ ավտովթարից, և էդ հանդիպակաց մեքենայի վարորդը թուրք էր: Նույնիսկ շրջանի ժողովուրդը ասում էին. «Ա՛, թուրքերը չեն թողնում երևելի մարդ մնա, բոլորին վերացնում են» և այլն: Բայց իհարկե դա այդպես չէ: Դա ուղղակի գուտ ավտովթար էր, և իմ հայրը խմած էր նստել դեկին, և հիմնականում իր մեղքն էր, որ էդ վթարը տեղի էր ունեցել:

Հա: Էսպես, առհասարակ թուրքերի հետ ուրիշ շփում չեմ ունեցել, որովհետև էն ժամանակ էսպես էր. կարծեմ Վարդենիսը քառասուն գյուղ ուներ, որից երեսունվեցը թուրքաբնակ էր կամ խառը բնակչությամբ: Մեր էլ երկու, երեք գյուղում՝ մաքուր հայկական գյուղեր էին: Մեր գյուղում թուրք չկար, որ ես իրենց հետ շփվեի, և բնականաբար էդպես առիթ չի եղել: Բայց գաղթականներ՝ վեպում նկարագրված գաղթականներ, իհարկե, շատ կային, և էդ Սևանի ցամաքած մասը, որտեղ հետո իրանք առանձին թաղ հիմնեցին. գաղթականների թաղը: Պիտի ազնվորեն ասեմ, որ գաղթականները և՛ ինտելեկտուալ մակարդակով, և՛ կենցաղային, և՛ ապրելու կուլտուրայով, և՛ մնացած բոլոր առումներով շատ ավելի բարձր էին տեղացիներից. տեղացիները հետամնաց էին: Դրա համար սկզբնական շրջանում՝ իրենց գալու սկզբնական շրջանում, էդպես թաղերը առանձին էին. վերևում՝ տեղացիներն էին, ծովի ցամաքած մասը՝ որպես ավազ, որպես վատ հող, որովհետև էդ մեր կողմերում բոլորը սարեր են, էդպես սևահող չկա, հա, իրենց էին հատկացվել, հա՞. էնտեղ ապրում էին գաղթականները: Մենք հենց էդ գաղթականների թաղում էինք, աստիճանաբար նոր ընտանիքները իջնում էին դեպի լիճ, հա: Եվ շատ եմ շփվել՝ և՛ իրենց կենցաղը, և՛... Շատ, շատ ավելի հետաքրքիր բաներ ունեին իրենք, քան ես կարողացել եմ վերարտադրել իմ վեպում: Պետք է ասեմ, որ չգիտեմ, դա իմ մեղքն է, թե նյութի մեղքն է, որ...

Նաև մի քիչ խուսափում էր էսպես, որովհետև էս հաստափոր գրքերը մարդուն վախեցնում են չէ՞: Էսօրվա մարդը անընդհատ շտապում է, անընդհատ ժամանակ չունի: Այն, որ իմ պատմվածքներից խոսում էք «կարճ, կարճ, կարճ» հենց նաև... Կարճության պատճառը նաև էն է, որ երբեմն ես ժամանակ չունեմ, որ դնեմ էդ դրվագը բացատրեմ, նկարագրեմ և այլն: Մյուս կողմից էլ գտնում եմ,

որ էդպես ավելի ճիշտ է, որովհետև երբ որ դու գրում ես «գեղեցիկ կին» ու թվարկում ես խոշոր աչքերով, կապույտ... չգիտեմ, սպիտակ մաշկով և այլն՝ դու քո ճաշակն ես պարտադրում ընթերցողին: Դու պիտի չբռնանաս ընթերցողի վրա: Եթե գեղեցիկ է՝ ամեն մարդ թող իր պատկերացրած գեղեցիկը էդպես էլ զգա: Հա, էդ առումով մտածեցի, որ եթե ես ավելի կենտրոնանամ էդ կենցաղային մանրամասների վրա, որը դեպի ավելի ազգագրություն կտաներ՝ մի քիչ կհոգնեցներ ընթերցողին, մի քիչ կվախեցներ և այլն: Դրա համար շատ, շատ քիչ բաներ պահպանեցի վեպում իրենց էն ամենից, ինչ ես տեսել եմ իրենց տներում, էսպես ասեմ:

ԳՏԳ – Էդ պատմվածքների փոքրությունը ինձ թվում է շատ հասկանալի է, որ ասում ես, որ ուզում ես սեղմ գրել: Դա հասկանալի է, բայց պատմվածքների փոքրությունը, ինձ թվում է, կապ չունի ներկայիս, կոպիտ ասած, մարդկության ժամանակ չունենալու հետ: Դա ժանր է, դա ֆեյսբուքյան ստատուս չէ՝ դա ժանր է:

ՄՀ – Բայց ժանրն էլ հենց այնպես... Հենց էնպես չի ծնվում: Հիմա, ասենք, լատինաամերիկյան գրականության մեջ կան կես էջանոց վեպեր, չգիտեմ ինչ, հա:

ԳՏԳ – Էդ ուրիշ՝ էքսպերիմենտ է և այլն: Բայց կա նաև... Ես նույնիսկ չեմ կարդացել, բայց գիտեմ, որ ինչ-որ քառասուն էջանոց... քառասուն հատորանոց վեպեր կան: Եվ դու ես վերջերս նշեցիր, որ կա երեք հարյուր վաթսուներեք էջանոց պատմվածք: (- Հա) Էնպես որ...

ՄՀ – Հա: Չէ, էդտեղ... էդտեղ նաև տաղանդի հարց է, նաև վարպետության հարց է: Օրինակ ես չեմ կարող խոսել երեք հարյուր վաթսուներեք էջ: Գուցե ավելի տաղանդավոր մեկը կարող է...

ԳՏԳ – Չէ, դու խոսել ես ավել, որովհետև մեկ-երկու էջով՝ ութը գիրքը կա:

ՄՀ – Հա, ես... ես ասեմ: Ես ուրեմն չեմ համարում, որ ես ընթերցողից ինչ-որ բանով առավել եմ: Տարբերությունը՝ էսպես, դու բարիկաղի ո՛ր կողմում ես, է՞ս, թե է՞ն, ինձ համար նշանակություն չունի: Ես ընթերցողին ընդունում եմ որպես հավասար համահեղինակ: Այսինքն ես իրեն մտածելու տեղ եմ թողնում, որովհետև ինձ ձանձրացնում են մանրամասն նկարագրությունները, ինձ ձանձրացնում են, որ լեզուն հղկում են, հղկում են, հղկում են՝ սարքում են արհեստական: Դա էլ լեզվի վրա բռնություն է: Ումանց կարծիքով՝ գեղեցիկ լեզվով գրեցին, բայց դա բռնություն է լեզվի հանդեպ. դու իր բնական վիճակը խեղաթյուրում ես: Եվ գրելուց, իհարկե, էդ բաները հաշվի չես առնում, հետո դրանք սթափ ուղեղով երբ որ դատում ես, պարզվում է, որ բնագործն էր անում ես էն, ինչ ճիշտ ես համարում, ինչ պետք է:

ԳՏԳ – Գլխավորը, որ հաղորդվում է: Այսինքն ես, որպես, անկեղծ ասած, շատ բծախնդիր ընթերցող, ստանում եմ, այսինքն՝ ոչ մի կարիք չեմ զգում հավելյալ մանրամասնի քո պատմվածքների դեպքում: (49:59 - Շնորհակալ եմ): Եվ ուրեմն՝ դու հաղորդեցիր, և ուրեմն՝ դա էդ գրողի, արձակագրի՝ բանի՝ էդ, ինչ ասեմ, փեշակի, հա՞, և շնորհքի համաձուլվածքի արդյունք է: Որի հետ կապված մի հարց ունեմ. փակագծերի մեջ, չմոռանամ նշել, երբևէ բանաստեղծություն գրել ես, թե ոչ. բայց էդ հետո:

Սկզբից հարցնեմ մի բան, որ պակասում է: Երկու հարցս էլ պակասի հետ է կապված, ինչը որ պակասում է: Եվ դու նշեցիր ինչ-որ չափով, որ գիտնականը, նկարիչը իրավունք ունի թողնել գնալ դուրս. Հենց դա էր իմ հարցը: Ես քանի որ պատմվածքներ ուրիշ... ուրիշ պատմվածքներ էլ եմ կարդացել, բայց ոչ շատ: Բայց ընդհանուր առմամբ իմ տպավորությունը՝ ինչից որ կարդացել եմ,

որ քեզ մոտ չկա ալտերնատիվ կյանքի կերպարներ, պատկերներ, իրադրություններ, էն, ինչ որ կարելի է ասել ժամանակակից, ինովացիոն, արկածային, բաց, ազատ, ինչ-որ չգիտեմ, ստեղծագործական, և այլն... ինչ-որ գիտնականի կերպար, որը գիտության ասպարեզի մեջ է հետաքրքիր բան անում, ոչ թե ուղղակի կյանքի մեջ ինչ-որ դժվարության է հանդիպում: Չկա՞ էդ բանը իրոք, թե՞ ուղղակի ես չեմ հանդիպել դեռևս, քիչ եմ կարդացել Մուսաննա Հարությունյան...

ՄՀ – Դե արի՛ հիշի. ունե՞ս այդպիսի կերպար, թե՞ չէ:

ԳՏԳ – Որովհետև ես... Կներես, ես մի ընկեր ունեմ, որը գրքերը կարդալուց, կամ արձակը, էդ է ասում: Ասում է. «Սա էլի էն գետնահար ռեալիզմն է, որը... - քո մասին չէ, էլի, ուրիշ, հա՞, - որը մենք սովոր ենք, իսկ այ, սա՝ ա՛յ դուրս է դրանից, արդեն ուրիշ ազգային գրականություն է», - էսպես ասած, որոշ գործերի մասին:

Այ էդ դուրս գալը ես վիճակից կա՞ քո գործերի մեջ:

ՄՀ – Այ... Այ էդ առումով իրավունք ունեք ասելու, որ ես մեծամիտ եմ, որովհետև ինձ համար բացարձակ կապ չունի, թե ի՞նչ կմտածի ընթերցողը իմ գործի մասին: Ես գրել եմ, ձեռքերս լվանում եմ ու քաշվում եմ մի կողմ: Մնացածը կկարդան, չեն կարդա, ես կհամարեն, ես –իզմը կտեսնեն, էն –իզմը կտեսնեն...

ԳՏԳ – Չէ, կներես...

ՄՀ – Հասկանում եմ: Այլընտրանքային՝ ես ասացի, չե՞. էն, ինչը իմ կենսափորձի միջով չի անցել՝ ես երբեք էդ նյութին ձեռք չեմ տա, եթե անգամ դրա անհրաժեշտություն... Էդ բացը կա: Ասենք՝ հիմա ֆանտաստիկ կամ արկածային գրականության բացը կա մեր գրականության մեջ, և կարող եմ նստել ու հորինել. «Այ, Չիպոլինոն գնաց էստեղ, էնտեղ, էնտեղ» չե՞, հա՛: Բայց դա չեմ անի: Չեմ անի, որովհետև դա լինելու է կիսատ-պռատ: Էն, ինչը իմ կենսափորձի միջով չի անցել, ես դա չեմ անելու: Ես երբեք չեմ ապրել դրսում, երբեք չեմ ունեցել այլազգի ընկեր, ընկերուհի, Երևանում նկատի ունեմ, հա, էսպես հեռակա...

ԳՏԳ – Ունես, մեկի մասին ասել ես ինձ:

ՄՀ – Այո, նամակագրությամբ՝ հա, նամակագրությամբ՝ ունեմ շատ... շատ ընկերներ, հա: Բայց էնպես, որ իր հետ էստեղ դուրս գամ՝ կինո գնամ, չգիտեմ, իրեն հյուր գնամ, ինքը ինձ հյուր գա՝ չկա իմ կյանքում էդպիսին: Այ էդ այլընտրանքային կյանքը ես չեմ տեսել, որպեսզի կարողանամ իր մասին իմ վերաբերմունքը արտահայտեմ կամ դարձնեմ դա ինձ պատմվածքի նյութ կամ թեմա: Իմիջայլոց էդ երևի նույն տիպի մտածողությունից էլնելով էլ մեր շատ գրողներ սկսում են գրել էսպես բաց թեմաներով, սկսում են գրել գրանտներով, սկսում են գրել կին-տղամարդ հարաբերության, «Հայրիկս ինձ շոշափեց, եղբորս ես համբուրեցի», չգիտեմ ինչ, ինչ, ինչ. դա շատ ավելի սարսափելի է, երբ դու գրում ես ինչ-որ... հանուն ինչ-որ բանի: Դա հենց հոգեկան այլասերումն է, երբ որ դու առևտուր ես անում ինքդ քո խղճի հետ, քո տաղանդի հետ, քո լեզվի հետ և... և առհասարակ՝ դու առևտուր ես անում: Հա: Գուցե, թե էդ բացը կա նաև իմ գրականության մեջ, բայց ես չեմ կարող գրել մի բան, որը ինձ օտար է, որը ինձ խորթ է և որը ինձ անձանոթ է:

ԳՏԳ – Դե ես էդպես չեի ասի: Ուղակի ես չեմ համարում, որ դու ինչ որ գրում ես՝ դու վերարտադրում ես աշխարհը. դու կերտում ես աշխարհ: Եվ **մարդ եթե կերտում է աշխարհ և ինչ որ բաց տեսնում է՝ դրա վերաբերյալ էլ կկերտի**: Ես, ուղղակի, հարցս դա է. արդյո՞ք էդ բացը չես տեսնում քո կերտած

աշխարհի մեջ, որովհետև, ասենք, հենց վեպին եթե անդրադառնանք՝ Կոնրադ Լորենցն է նշվում, և շատ կարևոր դեր կատարում վեպի հանգուցալուծման մեջ: Բայց այ էդ ուղղությամբ գնալը՝ բաց որպես, դա էր հարցս: Եթե պատասխանեցիր՝ արդեն կարող ես էլ նորից չպատասխանել: Բայց ուղղակի...

ՄՀ – Ճիշտն ասած, իրոք Կոնրադ Լորենցը իր գերությունը անցկացրել է Հայաստանում. գերության երկու տարին: Եվ մեր գյուղում մի փոքր կամուրջ կար, էսպես, գետի վրայով, հետո ջուրը դա քեցտարավ, և տեղը փոխարենը նոր կամուրջ կառուցեցին, հա: Ասում են, որ դա, ընդ որում, պատերազմից հետո՝ քառասունվեց-քառասունյոթ թվերին կառուցել են գերմանացի մի խումբ գերիներ, որոնց բերել են մեր գյուղ և էդ կամուրջը կառուցել են: Ե՛վ կամուրջը, և՛ գերմանացի գերիների կերպարը էդտեղից է հայտնվել իմ վեպում: Ես, ասենք, Լորենցի ապրածի մասին Հայաստանում ավելին չգիտեմ, և էլի պատմում էին, ասենք, Երևանի ծեր բնակիչները, որ գալիս... էստեղ կարծեմ Դինամո մարգադաշտն են իրենք կառուցել, չէ՞, գերմանացի գերիները:

ԳՏԳ – Մեր օֆիս բերող ճանապարհի, ներքևից եկող՝ Տերյան փողոցի ոլորանների... ոլորանները և դրա են գեղեցիկ պատը, որ հիմա քանդում են և սվաղում են. էդ քարե շարվածքը: Եվ շատ տեղերում՝ Դիլիջան քաղաքի էդ նույն ձևի պատը, քարե շարվածքը, և այլն, հա:

ՄՀ – Եվ գիտե՞ք հիմա... հիմա գրող լինելը շատ դժվար է: Հիմա գրականությունը բոլորովին այլ պահանջներ է դնում գրողին: Հիմա արդեն էլի կան գրողներ, որոնք էսօր, ասենք, ավելի շատ արձանագրում են, արձանագրություն են կազմում, քան պատմվածք են գրում կամ վեպ են գրում: Դա էս ճիշտ չեմ համարում, որովհետև էսօր և կա արդեն փաստագրական ֆիլմերի հարուստ պաշար, և փաստագրական գրականություն կա, և լուսանկարներ կան, և այլն, և այլն: Հա... Եվ դրա վրա ավելորդ ժամանակ կորցնել և բերել-խցկել վեպի հետ մի ավելորդ նկարագրություն կամ մի ավելորդ փաստ՝ անիմաստ է: Էսօրվա ընթերցողը շատ ավելի ինֆորմացված է, քան հիսուն կամ հարյուր տարի առաջ, և պետք չի ոչ ընթերցողից, ոչ էլ ինքը քեզնից ավելորդ ժամանակ խլես: Եվ վերջնական արդյունքում կարող ես ասել այն, ինչ ասում ես:

ԳՏԳ – Ես էդ առումով ուզում էի նշել... Չնայած չեմ ուզում շատ վեպիդ մեջ խորանալ, որովհետև լրիվ ուրիշ խոսակցություն կբացվի: Բայց էլի Լորենցի հետ և գերմանական գերիների հետ կապված. նախ դա շատ լավ է ու ճիշտ է, որ էդտեղ հորինվածք կա իրոք, ու էդ ուզում էի ասել, որ էլի ռեալիզմից հեռու է քո գրածը: Պարտադիր չի դա, հա՞, մենք դրա մասին խոսում էինք:

ՄՀ – Ֆոտոգրաֆիական համընկնում չի, այո:

ԳՏԳ – Այո: Եվ նույնիսկ ես կասեի լավ իմաստով՝ մուլտիկլի տպավորություն ես ստեղծում, են էջերը, որտեղ նկարագրում ես, թե ինչպես էին գերմանացի ռազմագերիները գոհվում էդ կամուրջը կառուցելիս: Մի անգամ գնացին՝ մի հատ պայթեց, մի հատ էսպես եղավ, մի հատ էնպես եղավ՝ բոլորը վերացան, բացի Կոնրադ Լորենցից: Դա զուտ էսպես արդեն առասպելաբանական, կամ մուլտիկլի միջոցով կարող ես պատկերացնել, ու հեջ վատ չի էլի դա: Այ էդ էլ արդեն, էդ դարձնում է ժանրը բացարձակ հեռու էն դասական ռեալիզմից, և շատ ավելի, էսպես, կինոպատումային և այլն, և այլն: Էնպես որ, էդ շատ լավ է, որ ստեղծում ես ժանր, ոչ թե սյուժե, ոչ թե միայն արձանագրում:

ՄՀ – Դե հենց դա է ստեղծագործողին գրող դարձնում, էսպես ասեմ, որովհետև աստծո տվածին դու քո կարեցածը պիտի ավելացնես, չէ՞: **Եթե էդ դեպքը կատարվել է, նաև դա քո ընկալումն է, քո վերաբերմունքն է, հազար ու մի բան: Եթե պիտի ուղղակի արձանագրես, դա քիչ առաջ ասացի, լինում**

է փաստացի արձանագրություն, ոչ թե գրական գործ: Եվ էդտեղ, որ ասում են՝ ստեղծագործող, հենց ստեղծագործական պահը էն գուցե տաղանդի դրսևորումն է, գուցե վարպետության, չգիտեմ ինչն է: Բայց դու պիտի քեզանից... քունը ավելացնես, այլապես դա չի ընթերցվի, որովհետև հիմա ասում են՝ աշխարհը էնքան պեղված, էնքան վերլուծված, էնքան հետազոտված... Էսպես ոչ մի նոր բան չես կարող ասել քո աշխարհայացքից, քո խոսքից բացի: Միակ նորությունը մենք ենք և էդ մեր հայացքն է՝ կամ թարմություն կմտցնի կյանք, կամ չի մտցնի. աշխարհում նոր բան չկա:

ԳՏԳ – Դե ինձ թվում է, որ նոր բանը դա այդ հայացքի միաձուլումն է այն բանին, որը հնում իբր թե կար, որովհետև ուրիշ ձևի նոր բան երբևէ չի եղել հա՞: Այսինքն՝ Նապոլեոնի արշավանքը ես հասկացել եմ շատ դասական ձևով՝ դա «Պատերազմ և խաղաղության» շնորհիվ, և էլ ոչ մի բան ինձ չի կարող դրդել, որ ես ուրիշ ձև պատկերացնեմ Նապոլեոնին, չնայած մնացած ամեն կարդացածիս: Էնպես որ նորը միշտ կա, այսինքն՝ էն հինը, որը նորացված չէ, այլևս իմաստավոր ինֆորմացիա էլ չէ իմ կարծիքով:

ՄՀ – Դե նորը հենց մենք ենք՝ էսօր ծնվածներս, էսօր ապրողներս: Եթե մարդը ծնվեց՝ ինքը էդ պահին նորություն է աշխարհի համար, չէ՞: Ծնվեց՝ բերեց իր աշխարհայացքը, բերեց իր ես-ը. ինքը արդեն դառնում է անհատականություն: Զբերեց՝ չբերեց, վերջ:

ԳՏԳ – Բայց ես հենց դրա վրա եմ ուզում կանգ առնել, որովհետև դու ասացիր. «Ես երբևէ դրսում չեմ ապրել, ես երբևէ չեմ շփվել շատ դրսի մարդկանց հետ», և այլն, և ասացիր, որ ուրեմն դու որպես... Ես պատասխան ունեմ, թե ինչու՞ դու քեզ էս հողի վրա լրիվ բավարարված ես զգում. որովհետև դու իրագործվել ես, որովհետև դու միշտ ունեցել ես, իմ կարծիքով, որովհետև, անկեղծ ասած, ես էլ դա ունեմ՝ էն պահը, որ ես իմ գործը գիտեմ. որտեղ էլ լինեմ, ինչ էլ անեմ (- Սեփական...)՝ իմ պարտքը, իմ «հոգու պարտքը» ես գիտեմ՝ ինչ է արվելու (- Հա) ու անիմաստ կյանք իմ մոտ չի կարող լինել. ինձ թվում է՝ դու ասում ես...

ՄՀ – Դա... Ասեմ. իմ դեպքում դա սեփական պիտանելիության գաղափարն է. որ ես պիտանի եմ: Տեսեք. այսօր գրողը պրոպագանդված չի, ընդունված չի, չգիտեմ...

ԳՏԳ – Բայց մեկ է՝ դու բավարարված ես:

ՄՀ – Հա, անկախ են բանից, ի՞նչ վերաբերմունք կա մտավորականության հանդեպ, ես գիտեմ, որ ես պիտանի մարդ եմ էստեղ, ես ավելորդ չեմ: Գուցե, թե ես թարգմանիչ լինեի, չգիտեմ, նկարիչ լինեի, որտեղ լեզվի խնդիր չլիներ, երաժիշտ լինեի, որտեղ դարձյալ լեզվի խնդիր չլիներ, վերցնեի իմ ստեղծագործությունները, գնայի դրսում և փորձեի էնտեղ կայանալ: Բայց քանի որ իմ գործունեությունը հենց բուն լեզվի և բուն ժողովրդի հետ է կապված, ես ավելի լավ գործունեության դաշտ, քան էստեղ, Հայաստանն է, չեմ պատկերացնում:

ԳՏԳ – Հասկանալի է:

ՄՀ – Էդպես է, չի լինում առանց ընթերցողի՝ գրող: Հիմա տեսեք. Ամերիկայում նույնիսկ գրողների՝ հայ գրողների միություն կա, բայց դրանք ինչ-որ ծիծաղելի ինքնամխիթարանքի բաներ են: Առանց ժողովրդի չի լինում մտավորական, առանց լեզվի չի լինում գրող. դրա համար ինձ համար, իր բազմաթիվ թերություններով հանդերձ, ինձ համար իդեալական միջավայրը ապրելու ես գտնում եմ, որ էստեղ է:

ԳՏԳ – Բայց եղ ամենը ուժի արտահայտում է: Մենք արդեն նշեցինք տղամարդկային ոճ... Չակերտավոր եմ ասում, որովհետև ինձ համար երբեք էլ դա բան չի եղել:

ՄՀ – Որոշ դեպքերում վիրավորանք կհնչի, հա՞:

ԳՏԳ – Հա, կարող է վիրավորանք... Չէ, արդեն ուղղակի խոսքը բերեց, չէ՞, դրան:

ՄՀ – Հա, հասկանալի է: Հա: Ըհր:

ԳՏԳ – Եվ ընդհանրապես քո վստահությունը, իրագործվածությունը: Հիմա հարցս եղ է. իսկ ի՞նչն է թուլությունը կամ թերությունը՝ արձակիդ, եղ, անհատ նկատի չունեմ. քո կարծիքով, էլի:

ՄՀ – Հա, ես ճիշտն ասած... Ես իմ արձակի առավելություններն էլ չգիտեմ, որ թերությունները... Եվ պիտի անկեղծ ասեմ՝ էնպես էլ չգիտեմ գրականության պատմությունը, ինչպես գրականագետները կամ որոշ գրողներ: Ո՛ր –իզմը ի՛նչ է նշանակում, դա էլ առանձնապես ինձ համար էական չի: Իհարկե, եթե մի քիչ ավելի միջավայր լիներ, գրողը պահանջված լիներ, իմ աշխատանքը՝ ես չէի ունենա ուրը գիրք, կունենայի տասնութ գիրք:

ԳՏԳ – Ես հասկացա, կներես, քո հիմնական լեյթմոտիվը, որ շատ հաճախ հնչեց, դա պահանջվածության և ճանաչված լինելու կարիքն է: Դա քո ուժեղ կերպարին հակասող և կարիք...

ՄՀ – Չէ, ճանաչված... ճանաչված լինելը եղբան չէ, որովհետև այսօր տեսնում ենք, հա՞, մեկը թռավ բեմ, վազեց այս ծայրից այն ծայր, արդեն ճանաչված է:

ԳՏԳ – Հա, նայած ինչ ճանաչվածություն:

ՄՀ – Երեկ լուրերով, նույնիսկ ազգային ամենակարևոր լուրը էն էր, որ ինչ-որ մեկը իր դաստակին, բան ա, դաջել է իր տղաների անունները, ընդ որում՝ օտար տառերով: Հա: Եվ դա, ասենք, «Արմենիա»-ի «Ժամը»՝ էսպես, որպես համազգային բան, կարևոր լուր հայտնում էր:

ԳՏԳ – Լա՞վ, թե՞ վատ:

ՄՀ – Լավ լուր, իհարկե, լավ:

ԳՏԳ – Բա օտար տառերովը ի՞նչն է լավ:

ՄՀ – Դե չգիտեմ, դա իրենց է պետք:

ԳՏԳ – Գոնե հայերեն դաջեր (սարկազմ):

ՄՀ – Այսինքն էսօր եղ ճանաչումն էլ հարաբերական է:

ԳՏԳ – Հա, իհարկե:

ՄՀ – Էսօր ամեն ինչ հարաբերական է: Էս պահանջվածությունը դա ճանաչվածությունը չի:

ԳՏԳ – Ուղղեցիր:

ՄՀ – Պահանջվածությունը բոլորովին այլ բան է. էսօր գրականությունը պահանջված չի, էսօր դպրոցներում, ուսուցիչները թող ինձ ներեն, բացարձակ գաղափար չունեն ժամանակակից գրականության, համաշխարհային գրականության... մեծ մասը ուսուցիչների, եթե էսպես խնայենք

մի երեք, չորս տոկոսին, հա՞: Եվ չգիտեմ, պահանջվածությունը բոլորովին այլ բան է: Պահանջվածությունը դա այն է, եթե դու ամեն օր ուզում ես հաց ուտել, ջուր խմել, քնել, արթնանալ՝ դու պիտի ունենաս քո հոգևոր արժեքների հետ շփվելու պահանջումը, դու պիտի պահանջես դա, որ դա քեզ տրվի... դա քեզ տրվի:

ԳՏԳ – Ես համարում եմ, որ քո գրածները պահանջված են: Խոսենք պատմվածքների մասին նախ և առաջ, և՛ ընթերցողի կողմից. որովհետև, ինչպես բացատրեցի՝ դա կյանքի իմաստությունը ընկալելու, հասկանալու դասընթաց է: Նայես կյանքը ու հասկանաս: Եվ դա իմաստ է հաղորդում մարդու կյանքին, այսինքն՝ նա, ով գրող չի կամ նկարիչ չի և չի կարողանում ինքնադրսևորմամբ էս կյանքում իր հարցերը լուծել և գուցե դրա պատճառով է գաղթում, գնում ավստ լվանալու կամ ինչ՝ նա կարող է սա կարդալով ձեռք բերել կյանքի նկատմամբ հայացք, որը իրեն թույլ կտա էդ ինքնադրսևորումը իրագործել:

ՄՀ – Հա, մենք ոնց պատվում ենք՝ գալիս ենք նույն կետին: Բայց ինքը պիտի իմանա, որ այսինչ տեղում այսինչ գիրքը կա:

ԳՏԳ – Որ էս կա, այո՛:

ՄՀ – Ձեր կողքին այսպիսի մարդ է ապրում:

Եվ էսօր, ցավոք սրտի, մեր մշակույթի բացը էն է, որ չի պրոպագանդվում մեր մշակույթը, նաև դրսում չի պրոպագանդվում: Նաև, ասենք, հիմա գործեր ենք ուղարկում դրսի հրատարակիչներին՝ չգիտեն Հայաստանը ի՞նչ երկիր է, երբ որ մեր դասական գրականությունը փայլուն արժեքներ ունի, և (- դե էս ասեմ) սովետի տարիներից ի վեր դա պրոպագանդված չի, որ դրսում... Հըլը էն ժամանակներսում էլի պրոպագանդում էին, որովհետև ներսում գրողին իշխանությունը դիտում էր որպես գործընկեր, իր գաղափարախոսը, հիմա դա էլ չկա: Հիմա գրողների մեջ չկա մեկը, որ ասես՝ այ, սա իշխանության գաղափարախոսն է, կամ իշխանության մարդն է, կամ նրա կշիռը՝ խոսքը կշիռ ունի իշխանական օղակներում: Ես չգիտեմ, մտավորականության այլ շերտերում կան էդպիսի մարդիկ, թե չէ, բայց գրողների մեջ ցավոք սրտի չկան:

ԳՏԳ – Գիտես ինչ, այ, քանի որ հանրային ուղղությամբ է գնում մեր խոսակցությունը՝ մի քիչ շարունակենք, որովհետև թեման հետաքրքիր է: Որոշ շրջաններում դու՛ էս էդպիսին ընկալվում, որովհետև դու ստացել ես Դեմիքոյանի մրցանակ, ստացել ես Մերժ Սարգսյանի ձեռքից, եթե չեմ սխալվում...

ՄՀ – Նախագահի մրցանակ:

ԳՏԳ – Այո: Այսինքն՝ դու էլ չունես, որ ձայնդ լսվի. դու դա էս հիմա ասում: Վերադառնանք մեր... քո «խոհանոցային» խոսակցությանը: Մի քանի անգամ նշեցիր, որ գրականագետ չես, շատ չգիտես գրականությունը, չնայած էս գիտեմ, որ բանասիրական կրթություն ունես: Համենայն դեպս, ամեն դեպքում, ու՞մ հետ էս չափվում հեղինակներից, ու՞մ էս քեզ համարում մի բան տված, ու՞մից էս սովորում, ու՞մ... ու՞մ... ու՞մ գործի նկատմամբ շահախնդրություն ունես, որ. «Ա՛յ, էս կուզեի՝ իմ գործն էլ սրա պես հնչած լիներ», կամ ինչ-որ էդ ուղղությամբ:

ՄՀ – Հա, գիտե՞ս, Գևորգ ջան, էս էնքան անկայուն մարդ եմ՝ էս պահին թեյ եմ սիրում, հաջորդ պահին սուրճ եմ սիրում, հաջորդ պահին սուրճ եմ սիրում: (- Ոչինչ): Էս պահին էս երաժշտությունն էմ սիրում, հա:

ԳՏԳ – Էս պահին ո՞ւմ ես սիրում:

ՄՀ – Հիմա ես չգիտեմ: Իհարկե շատերից եմ սովորել, շատ շատերից: Եթե ոչ մի բան՝ գոնե մեր դասականներից ճիշտ հայերեն եմ սովորել, հայոց լեզու եմ սովորել: Էսպես չեմ կարող ասել, բոլորից էլ սովորել եմ: Ումի՞ց չի կարելի սովորել. և՛ Դեմիտրյանից կարելի է սովորել, և՛ Ստեփան Զորյանից կարելի է: Մեր լավագույն պատմվածքագիրներն են. եթե դու պատմվածք ես գրում, չէ՞, դու գրող ես և սկսում ես պատմվածք գրել՝ ուզած-չուզած. եթե դու չգիտես, չես կարդում, չես ուսումնասիրում՝ ուրեմն դու ի՞նչ գրող ես, չէ՞: Եվ էլ կարդալու, ուսումնասիրելու ընթացքում գուցե դու չես էլ գիտակցում. «Այ, սա վերցրեցի, սա սովորեցի»: Հետո... հետո դա քո մեջ մշակվում, վերամշակվում... Չգիտեմ... Մեր գրողներից մեկը արտագրել էր: Ասեցի. «Բայց սա էսինչ տեղում կարդացել եմ»: Ասեց. «Բայց իզու՞ր են ասում, որ կարդացածդ պիտի յուրացնես»: Նայած՝ դու ոնց ես յուրացնում: Հա, դե դա՝ անհնար է գրող լինել առանց... Դա նույնն է, որ մարդ լինես առանց կենսագրության. առանց քո ժողովրդի, առանց համաշխարհային գրականություն, մշակույթ իմանալու դու չես կարող գրող լինել: Դե հիմա ո՞ր պահին, ումի՞ց, ի՞նչ է վերցրել քո ուղեղը, ո՞նց է վերամշակել, ո՞նց է անցկացրել դա, դա արդեն լրիվ...

ԳՏԳ – Բայց մի գերադասություն ասա:

ՄՀ – Դե չգիտեմ: Գերադասությունը... ամենաչափածո բանը՝ էն որ հատկապես հրատարակիչները, շատ է վաճառվում էսինչը, էնինչը, ու թվարկում են, էսպես, արտասահմանյան հեղինակներին: Մեզանից առնավազն երկու հարյուր տարի առաջ ապրած... Հա:

ԳՏԳ – Չքննարկենք, բայց Կոելյոն է ամենաշատ Հայաստանում վաճառվում, որը ընդհանրապես քննարկելու բան չի:

ՄՀ – Չե, չե, վաճառվելը չէ: Դա, հենց դա, հենց ձեր ասած դիվանագիտությունն է, որ եթե դու հրատարակիչ ես ու նստել ես կամերայի առաջ, դու գոնե քո ազգային մի դասականի անուն տուր, հետո նոր անցի մյուս «կիսապրծիկներին», որոնց դու տպել ես, ինչքան էլ որ ուզում ես դա հրատարակել: Դա կոչվում է ազգային գաղափարախոսություն, դիվանագիտություն, չգիտեմ ինչ, ինչ:

ԳՏԳ – Դա շատ լավ խորհուրդ էր, որ պետք է հաշվի առնել...

ՄՀ – Լավ խորհուրդ չէր, դա դիտողություն էր, և մեր շատ պատկառելի հրատարակիչներից մեկն էլ ինձանից հավանաբար նեղացավ, որ Թումանյանի ծննդյան օրը ինքը նստել էր ու ասում էր. «Այ, վաճառվում է էսինչ գրողը, այ էնինչ գրողը», ընդ որում Թումանյանից ոչ լավ՝ հազար գլուխ ցածր:

ԳՏԳ – Բայց գիտե՞ս, որ էլեկտրոնային գրքերով Թումանյանը ամենաշատն է վաճառվում:

ՄՀ – Հա, չե, ուզում եմ ասել... հա:

ԳՏԳ – Թումանյանը Մարատ Յավրումյանի կայքում փողով է՝ պիտի գնվի, իսկ մնացած գրեթե բոլոր հեղինակները ձրի են, որովհետև...

ՄՀ – Անվճար են:

ԳՏԳ – Հա, հենց էլ էլ կա, որովհետև երեխաների համար առնում են ծնողները:

ՄՀ – Դե... Ինչի՛ց սկսեցինք, հա՞... Ինչի՛ց սկսեցինք, ու՛ր հասանք: Այ էդ անուններ տալն էլ հարաբերական բան է:

ԳՏԳ – Թումանյան ասեցիր: Հըլը որ մենակ Թումանյան ես ասել: Հա՛ Դեմիրճյան... Դեմիրճյան, Չոբյան, հա:

ՄՀ – Չէ, ինչի՞, Իսահակյանն էլ ինձ համար բացառիկ բարձր պոետ է: Վարուժանը ինձ համար, չգիտեմ, հանճարների հանճարն է:

ԳՏԳ – Պոետ ասելով՝ ի վերջո բանաստեղծություն գրե՞լ էիր:

ՄՀ – Այո, այո: Ես դպրոցական տարիներին միայն հոդվածներ և բանաստեղծություններ եմ հրատարակել «Պիոներ կանչ»-ում: Վերջին բանաստեղծությունս տասներորդ դասարանում եմ... Չէ, առաջին կուրսի, «Մանկավարժ» թերթում՝ մանկավարժական ինստիտուտի: Դրանից հետո արդեն իհարկե դարակներումս լիքը կան բանաստեղծություններ... որ տպեմ՝ վատ էլ բանաստեղծություններ չեն, բայց մի տեսակ, չգիտեմ, ինձ չեմ պատկերացնում բանաստեղծի դերում, էսպես ասեմ: Դա գուցե քո ապրում... քո ապրումը դու վերածեցիր տողի, բայց դա դեռ բանաստեղծություն չի, չէ՞: Եվ մի տեսակ չեմ սիրում, որ, ասենք, մարդիկ իրենց Վերածննդի տիտան են կարծում. և՛ արձակագիր են, և՛ բանաստեղծ են, և՛ թարգմանիչ են, և՛ գրականագետ են. մարդ կա՝ էսպես ամեն... Իհարկե ունանց տրված է էնքան, որ դա հաջողվում է: Բայց կարծում եմ՝ դա իմ դեպքը չի: Ես... Ես շատ գոհ կլինեմ, եթե քիչ թե շատ տանելի արձակագիր լինեմ: Բանաստեղծություններ մինչև հիմա էլ գրվում են, բայց ես դրանց կարևորություն չեմ տալիս և չեմ... Գոնե իմ գրածները արժեքավոր չեմ համարում հրատարակելու համար, էսպես ասեմ:

ԳՏԳ – Լավ: Վերջին հարցս. ի՞նչ գրողական խնդիր ես լուծում որպես արձակագիր: Գուցե արդեն պատասխանել ես մեր գրույցի ընթացքում, գուցե նոր բան պիտի ասես:

ՄՀ – Ես ճիշտն ասած... Լինում են դեպքեր, որ ուզում եմ շատ խելացի երևալ, շատ էսպես լավ-լավ բաներ ասել, կարևոր մտքեր, բայց սա էդ դեպքը չի, էլի: Ես նորից եմ ասում, որ չեմ դնում որևէ խնդիր: Գրվում է՝ գրում եմ: Էդպես զուտ բնագոյաին պրոցես է ինձ մոտ դա, և որ ասեմ «էսպիսի խնդիր եմ դնում», էս... **Ինձ համար ամենակարևոր խնդիրը՝ լեզվի առաջ խայտառակ չլինելը:** Որևէ մեկը չասի. «Այ սա... Տե՛ս՝ սա՛ մեր լեզվի համար սա խորթ է, սա անգրագետ է, սա չգիտեմ ինչ է»: Մնացած ամեն ինչը...

ԳՏԳ – Ընդ որում՝ շատ ազատ ես գրում. «դաժե» բառը դաժե կա (-Հա). շատ ազատ:

ՄՀ – Դե երկխոսությունների մեջ, ցավոք սրտի... ցավոք սրտի, երբ որ դու հերոսի մասին ես խոսում՝ դու չես կարող, ասենք, փողոցում կանգնած էն, էսպես, երկար ճկույթով տղան... տղային խոսեցնել ակադեմիական լեզվով: Ուզած-չուզած դու էդ լեզվական խախտումները օրինականացնում ես: Եթե գրեցիր դա, չէ՞, փաստացի դու օրինականացրեցիր:

ԳՏԳ – Բայց (– Բայց որպես գրող ուզած-չուզած դա արվում է) հակառակն էլ ինձ... Օրինակ, երբ երեսունականների սովետահայ միլիցուն «նստիկան» ես անվանում հեղինակի լեզվով, դա էլ ինձ խորթ հնչեց: Ես կգրեի «միլիցիա», որովհետև միլիցիա էր, նստիկան չէր:

ՄՀ – Հա՛: Չէ, հիմա էլի մի կիսատ գործ ունեմ, որտեղ նստիկանի կերպար կա: Ես պիտի ասեմ, որ բանը... էս էնքան խղճում եմ նստիկանների: Ինչքան դաժան և ինչքան աղքատ է իրանց կյանքը,

չէ՞: Բան է էլի՝ էդ... Իմ տղան մի վիրավորական բան ունի, որ ասում է «վրաս քիչ խոսա»՝ ասում է. «դե էլ միլիցիայություն մի արա գլխիս»: Հա: Չգիտեմ իրանք անընդհատ... անընդհատ սենց ձիգ, անընդհատ՝ էս կարելի է, էս չի կարելի, սա՝ էսինչ հողվածը, նա՝ էսինչ հողվածը. շատ ողորմելի կյանք է խեղճերի կյանքը:

ԳՏԳ – Այ էդ, որ ասում եմ՝ որոշ թեմաներ չես զարգացրել, օրինակ լավ ու ճիշտ ոստիկանի թեման մեր գրականության մեջ շատ ուժեղ պակասություն է անում, ու կյանքում:

ՄՀ – Ես... Ես անկեղծ... Ես անկեղծ ասեմ՝ էս չեմ տեսել լավ ու ճիշտ ոստիկան: Մեր ազգում էլ մոտիկ ազգականներ ունեմ էդ ցանցում աշխատող: Ես չեմ տեսել ճիշտ ու լավ ոստիկան: Եթե ունենք՝ էս...

ԳՏԳ – Պետք է ստեղծել, որ օրինակ վերցնեն ու դառնան:

ՄՀ – Դե, չգիտեմ: Ես չեմ կարող էդպես նստել ու հորինել լավ ոստիկանի կերպար: Հա, բոլոր դեպքերում կյանքից ինչ-որ... գոնե երեսուն տոկոսը, գոնե քսան տոկոսը, գոնե ինչ-որ իրեղեն հիմք, էսպես ասած՝ իրեղեն հիմք, էսպես ասած՝ իրեղեն ապացույց քո գրականությունը պիտի ունենա: Ես չգիտեմ, մեր էսօրվա ապրած... ապրող մարդը, որ ոստիկանների կողմից և՛ ծեծվում է, և՛ ձերբակալվում է, և՛ գնդակահարվում է, որքանով կհավատա ինձ, որ էս դնեմ ու հորինեմ մի պայծառ ոստիկանի կերպար:

ԳՏԳ – Դու որ՝ դու կկարողանաս:

ՄՀ – Դե, գիտեք, էս իմ նոր կերպարը մի քիչ, էսպես, մարդանման է, հա, բայց բոլոր դեպքերում, չգիտեմ, ցավոք սրտի մենք չունենք էդ ցանցում նորմալ... Գոնե ինձ չի հանդիպել, գոնե էս, էսպես, իմ տնային տնտեսուհու խոհանոցից չեմ տեսել էդ կերպարը, որպեսզի...

ԳՏԳ – Լավ, բայց մենք կուզենայինք լավ նոտայի վրա ավարտել: Դրա համար անդրադառնամ քո գրողական խնդրին, որ դու որպես լեզու ձևակերպեցիր: Ինձ համար դա ոչ թե լեզվի ինչ-որ ռեզիստրին համապատասխանելն է քո ստեղծագործության մեջ, այլ լեզվի իմաստությունը (-Ըհը), էդ էլ Հրանտ Մաթևոսյանն էր ասում. լեզվի իմաստությունը:

ՄՀ – Բայց բարբառների հարցում իմ հեղինակները, իմ հերոսները, ինչպես տեսաք էդ գրքում, չէին խոսում էդ Վանի բարբառով, որտեղից Սևանի ավազանում հենց էդ վանեցի գաղթականները տեղակայվել էին, այլ, էսպես, ընդհանուր, միջին, ինչ-որ լեզվական ինչ-որ բան գտել եմ մոտավորապես, էդպես դա... ընդօրինակել է Հրանտ Մաթևոսյանին: Իր հերոսներն էլ չեն խոսում լոռվա բարբառով. էսպես, խոսում են սովորական, նորմալ, միջին ինչ-որ խոսվածքային լեզվով: Հա: Եվ էս էլ որոշեցի, որ էսօրվա նույնիսկ գրականագետը չի հասկանա, եթե էս դնեմ էդ երկխոսությունները գրեմ վանեցու ու մշեցու բարբառով: Դրա համար մի քիչ մեղմացրեցի դրանց, բայց միևնույն է՝ էդ բարբառների իմացությունը քո երևակայությունը սնում են, քո գիտելիքը հարստացնում են, քո լեզուն դարձնում են ավելի հյութեղ: Ինչքան էլ հղկես, ինչքան էլ վերածես գրական հայերենի, միևնույն է՝ դրանք երանգ, որոշակի երանգ մցնում են քո լեզվի մեջ:

ԳՏԳ – Բայց էս «իմաստությունը» բովանդակայինը նկատի ունեի նախ և առաջ, և ուզում եմ դրանով ավարտել: Էն պատմվածքը, որ քարի հետ է կապված՝ երիկամի թե լյանդի մեջ եղած քարերի հետ, կարծեմ «Երկնքի քարեր» է կոչվում, թե ինչ, հա՞:

ՄՀ – Հա, հա: Չեմ հիշում արդեն:

ԳՏԳ – Ուրեմն երկու ընկերուհի խոսում են: Մեկը ասում է, միշտ պատմում է, որ էստեղ, գեղեցիկ ինչ-որ տոպրակի մեջ, իր երիկամից հանած քարերն է ման ածում: Մյուսը ասում է. «Քո մեջ քար է՝ իմ մեջ հոգի: Միշտ քո միջի քարերի մասին ես խոսում»: Սա էլ պատասխանում է. «Ի՞նչ տարբերություն, հոգին քարին քսվի, թե քարը հոգուն. մեկ է ցավում է»:

Այ էս աֆորիզմների հասնող մտքերը, առանձին խոսվածքները շատ-շատ են քո գործի մեջ: Եվ դա էլ է հսկայական արժեք, որը իմաստ է դարձնում մարդուն կարդալ, որովհետև դու կտվորես, մարդը կամ ընթերցողը կտվորի: Էդ աֆորիզմները մնում են մարդու մեջ: Ու կօգտագործի ու կյանքում կտեսնի, թե դա ինչպես է լինում, հա՞: Կյանքի դեպքեր կհանդիպի, որտեղ դրանք հանդիպում են:

Շնորհակալություն, կարդացեք Սուսաննա Հարությունյան:

ՄՀ – Շնորհակալություն:

*Մղազրությունը՝ Տաթևիկ Ղահրամանյանի
Մղազրության ավարտը՝ օգոստոսի 12, 2017թ.*